

ԽՍՀՄ ԿԱՊԻ ԺՈՂ. ԿՈՄՍԱՏ

ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ  
ՄԱՄՈՒԼԻ  
ՏԱՐԱԾՈՒՄԸ

ԿԱՊԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԵՌԱԿԱ ԳԱՍԸՆԹԱՅՆԵՐ

07(47)  
F-81

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՉԽՍՀ ԿԱՊԻ ՎԱՐՋՈՒԹՅԱՆ  
ՑԵՐԵԼԱՆ

1930

07(47)

F-81

W

ԽՍՀՄ ԿԱՊԻ ԺՈՂԿՈՄԱՏ

23 JUN 2009

ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ  
ՄԱՄՈՒԼԻ  
ՏԱՐԱԾՈՒՄԸ

ԿԱՊԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կապիտալիստական յերկրներում բուրժուական մամուլը ծառայում է կապիտալիստների ու կալվածատերերի շահերին: Նույնն է յեղել նաև ցարական Ռուսաստանում: Յարական Ռուսաստանի բուրժուական-կալվածատիրական մամուլը պաշտպանում էր իշխող, շահագործող դասակարգերի շահերը: Նա խաբում էր աշխատավորութանը, ամեն կերպ աշխատում էր պրոլետարիատի ու աշխատավոր գյուղացիութան ուշադրութունը շեղել ցարիզմի դեմ մղվող հեղափոխական պայքարից, նա ոժանդակում էր բուրժուազիային ու կալվածատերերին դազանաբար շահագործելու բանվորներին ու գյուղացիներին:

Ամբողջովին կեղծ ու ծախու բուրժուական մամուլն իր հանդեպ բացարձակ անխտանջութուն էր առաջացնում: «Լրագրերը ստում են»՝ այսպես էլին հաճախ ասում աշխատավոր մարդիկ՝ հին ցարական ժամանակները: Յեվ հասկանալի յե՝ բուրժուական թերթն ատելի յեր աշխատավորութան համար: Նա մթնեցնում էր մարդկանց գիտակցութունը, խաբում էր նրանց, թունավորում էր մասսաներին շովինիզմի ու մարդատեցութան, կեղծիքի ու բամբասանքի թույնով, վորոնց ոգնությամբ նա ձգտում էր արդարացնել և ամբացնել բուրժուական այն կարգերը, վորոնք հիմնված են մարդու կողմից մարդուն շահագործելու, ազգային ճնշման ու անհավասարության վրա: Ահա թե ինչու բանվորներն ու գյուղացիները թշնամանքով էլին վերաբերվում բուրժուական մամուլին, ասում էլին այդ մամուլը ճիշտ այնպես, ինչպես ասում էլին բոլոր շահագործողներին ու ճրջողներին:

Վոստիկանութունն ու ժանդարմերիան ցարական Ռուսաստանում հարածում ու արգելում էլին բանվորական մամուլը: Բուրժուական բոլոր յերկրներում կոմունիստական թերթերն ամեն տեսակ արգելումների ու հալածանքների յեն յենթարկվում: Ընդամին բուրժուազիան աշխատում է թագցնել մասսաներից այն փաստը, վոր նա թույլ է տալիս միայն այն թերթերի



6333  
39

գոյությունը, վորոնք ծառայում են կապիտալիստներին: Բուր-  
ժուակիան կեղծորեն և յերեսպաշտորեն հայտարարում է, վոր  
երբ կապիտալիստական հասարակության մեջ գոյություն ունի  
մամուլի ազատություն: Վ. Ի. Լենինը, մերկացնելով բուրժուա-  
կան այդ կեղծիքը, մատնանշում է, վոր կապիտալիստական իրա-  
վակարգում «մամուլի ազատությունը»

«... դա իրականում հարուստների համար մամուլը  
գնելու և կաշառելու ազատություն է, ժողովրդին բուր-  
ժուական լրագրային կեղծիքի հացողիով հարեցնելու հա-  
րուստների ազատություն է...» (Յերկ. ժողով., հատ. XXIII,  
էջ 442):

«Գողեր, պոռնիկ տղամարդիկ, ծախու գրողներ, ծա-  
խու լրագրեր: Այս է մեր «մեծ մամուլը» (Յերկ. ժողով.,  
հատ. XVII, էջ 282):

Այսպես է բնութագրել Լենինը բուրժուական մամուլը:

Բուրժուական մամուլի նողկալի եյությունն առանձնապես  
ցայտուն կերպով յերևան է գալիս Ֆաշիստական յերկրներում:  
Փաշիստական մամուլը մարտնչում է ի շահ կապիտալիստների՝  
աշխատավորությանն անխնա շահագործելու համար, բանվոր  
դասակարգի միասնականությունը ջախջախելու համար, կատաղի  
վրձնոց է արձակում «ղեմոկրատիա» բառը լսելիս անգամ, ջար-  
գարարության կոչ է անում ու չարամտորեն գրպարտում է  
բանվոր դասակարգին, գյուղացիությանը, կոմունիստներին,  
ստի հեղեղներ է թափում հզոր Խորհրդային Միության վրա:

Փաշիստական յերկրներում փակված ու ջախջախված են վոչ  
միայն բանվորական թերթերը, այլև այն ամբողջ մամուլը, վոր  
թեկուզ աննշան չափով համաձայն չէ Ֆաշիզմի հետ: Մնացել են  
միայն կազյոննի Ֆաշիստական թերթերը:

Բանվոր դասակարգն ու աշխատավորությունը կեղտոտ Փա-  
շիստական թերթերի միջոցով տարածվող կեղծիքին և զրպար-  
տությանը պատասխանում են նրանով, վոր ուղղակի դադարում  
են կարգալ այդ ստող մամուլը: Փաշիստական շատ թերթեր  
փակվել են այն պատճառով, վոր բացակայում են... ընթերցող-  
ներ:



Բուրժուական այլ վերաբերմունք կա դեպի տպագիր խոսքը  
մեզանում, Խորհուրդների Յերկրում:

Մեր յերկրում բոլշևիկյան մամուլը՝ դա իրեն աշխատավո-  
րության մամուլն է: Խորհրդային մարդկանց սովոր մեծամաս-  
նության համար լրագիրը դարձել է կենսական անհրաժեշտու-  
թյուն: Այդ լրագրի ընթերցումը խորհրդային մարդու ամենա-  
եյական պահանջն է: Այնպես, ինչպես մեր կոմունիստական կու-  
սակցությունը բանվորների, կոլտնտեսականների և խորհրդային  
ինտելիգենցիայի անսահման վստահությունն ու ջերմ սերն է վա-  
յելում, նույնպես և բոլշևիկյան մամուլը, Լենինի—Ստալինի  
մեծ կուսակցության մամուլը վայելում է ամբողջ աշխատավո-  
րության վստահությունն ու սերը:

Ի հակադրություն կապիտալիստական յերկրների ծախու  
բուրժուական մամուլի, վորը խարում և հիմարացնում է մաս-  
սաներին, մեր բոլշևիկյան մամուլը միշտ ճշմարտությունն է  
ասում, նա սովորեցնում է մասսաներին կառուցել և ամրացնել  
սոցիալիստական հասարակակարգը, հաղթահարելով դժվարու-  
թյունները, մերկացնելով և վոչնչացնելով ժողովրդի թշնամիներ-  
ին՝ Ֆաշիզմի նողկալի գործակալներին:

Մեր մամուլն, ինչպես և նրա ղեկավար կոմունիստական կու-  
սակցությունը, չունի այլ նպատակներ, այլ խնդիրներ, բացի  
այն նպատակներից ու խնդիրներից, վոր դնում է իր ստաջ  
բազմամիլիոն, բազմազգ, բարոյաքաղաքական մեծ միասնու-  
թյամբ միաձուլված խորհրդային ժողովուրդը, չկա այլ ձգտում,  
բացի այն ձգտումից, վորը ժողովրդին տանում է դեպի յերջան-  
կություն ու բարեկեցություն: Մեր մամուլի ուղին՝ դա մեր  
կուսակցության ուղին է: Ահա թե ինչու մեր յերկրում բանվոր-  
ները, կոլտնտեսականներն ու ինտելիգենցիան այնպես թանգ են  
զնահատում բոլշևիկյան տպագիր խոսքը, ահա թե ինչու աշխա-  
տավորներն այնպես սիրում են իրենց բոլշևիկյան թերթը:

Մեր խորհրդային մամուլը հանդիսանում է Հոկտեմբերյան  
սոցիալիստական Մեծ հեղափոխության հսկայական նվաճումնե-  
րից մեկը, աշխատավորության մեծագույն հաղթանակը, Սո-  
ցիալիզմի յերկրում յերջանիկ և կուլտուրական նոր կյանքի կա-  
ռուցման կարևորագույն գործիքը:

Միայն Խորհրդային Միության մեջ գոյություն ունի մամու-  
լի իսկական ազատություն, վորն ամրապնդված է հաղթանակած  
սոցիալիզմի Ստալինյան Սահմանադրությամբ:

Ստալինյան Սահմանադրության 125-րդ հոդվածում ընդմիշտ  
արձանագրված է Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափո-  
խության խոչորագույն նվաճումներից մեկը՝

«Աշխատավորութեան շահերին համապատասխան և սոցիալիստական կարգերն ամրացնելու նպատակով ԽՍՀՄ-ի քաղաքացիների համար որոշուի ապահովվում է՝

- ա) խոսքի ազատութիւն,
- բ) մամուլի ազատութիւն,
- գ) ժողովների և միախնդների ազատութիւն,
- դ) փողոցային յերթերի ու ցույցերի ազատութիւն»:

ՀամԿ(բ)Կ XVIII համագումարում ընկ. Մոլոտովի ղեկուցման մեջ սոցիալիզմի հոյակապ այլ հաղթանակների թիւում նըշվում է, վոր հաջող կերպով լուծվել է աշխատավորութեան տրնտեսական-կուլտուրական մակարդակի բարձրացման՝ յերկրորդ հնգամյակում դրված խնդիրը: Յերկրորդ հնգամյակի տարիների ընթացքում ԽՍՀՄ-ում կատարվել է իսկական կուլտուրական հեղափոխութիւն: Սոցիալիզմի մեծ հաղթանակների հիման վրա խիստ բարձրացել է ժողովրդական լայն մասսաների կուլտուրականութեան մակարդակը:

Յերկրում տեղի ունեցած կուլտուրական հեղափոխութեան ամենացայտուն արտահայտութիւններից մեկը հանդիսանում է բոլշևիկյան մամուլի քանակական և վորակական անշեղ աճումը:

Արդեն ՀամԿ(բ)Կ XVII համագումարի նախորդին տպագիր արտադրանքը հասել էր հսկայական չափերի թե՛ տիրածների և թե՛ թերթերի, ժուռնալների ու գրքերի անունների քանակի տեսակետից: Թերթերի ցանցն ու տիրածներն առանձնապէս բուռն թափով աճել են ստալինյան առաջին հնգամյակի շրջանում: ՀամԿ(բ)Կ XVII համագումարում տված հաշվետու ղեկուցման մեջ ընկեր Ստալինը նշում էր, վոր թերթերի միանվագ տիրածը 1929 թվի 12 միլիոն 500 հազար որինակից աճելով 1933 թվին հասել է մինչև 36 միլիոն 500 հազար որինակի:

Այդ ժամանակից ի վեր մեր մամուլը ձեռք է բերել նոր, ավելի խոշոր նվաճումներ: Կուսակցութեան XVIII համագումարում ընկեր Ստալինը, խոսելով ժողովրդի կուլտուրական մակարդակի բարձրացման մասին, բերել է այսպիսի տվյալներ՝ 1933—1934 թվերին թերթերի տարեկան տիրածը կազմում էր 4 միլիարդ 984,6 միլիոն, իսկ 1938—1939 թվերին նա հասել է 7 միլիարդ 92,4 միլիոնի, այսինքն՝ համեմատած 1933—1934 թվերի հետ, թերթերի տարեկան տիրածը կազմում է 142,3 տոկոս:

Յարական Ռուսաստանում 1913 թվին հրատարակվում էր 859

թերթ 2,7 միլիոն որինակ ընդհանուր միանվագ տիրածով: Թերթերը դժվար էլին մուտք գործում գյուղը: Նույնիսկ ցարական կառավարութեան կողմից գյուղական կուլակային վերնախավի համար հրատարակվող «Сельский вестник» թերթը լույս էր տեսնում միայն 30 հազար տիրածով: Այս թերթի տասնհինգ հազար որինակը ճիշտաբար ուղարկվում էր տանուտերներին ու գրագիրներին, իսկ մնացած 15 հազարը տարածվում էր կալվածատերերի, տերտերների ու կուլակների միջև:

Թե խորհրդային գյուղում նախահեղափոխական շրջանի հետ համեմատած ինչպէս է փոխվել դեպի թերթը յեղած վերաբերմունքը, ամենից ավելի ցայտուն կերպով վկայում են հետևյալ տվյալները.

Կուլտուրական ամբողջ նախահեղափոխական վոլոստի (այժմ Իրկուտսկի մարզի Կուլտուրական ռայոն) համար դուրս էր գրվում ընդամենը 10 որինակ «Русское слово» և 3 որինակ «Ведомости святейшего синода»: Բաժանորդ էլին տերտերը, վոստիկանական ուրյադնիկը և մի քանի առևտրականներ: Այժմ Կուլտուրական ռայոնի կուլտուրականներն իրենց համար դուրս են գրել 7446 որինակ թերթ և ժուռնալ: Լենինի անվան կուլտուրական անդամները (Չեքոտարիխինսկի ռայոնի նույնանուն գյուղխորհուրդ) 96 անտեսութեան համար դուրս են գրել 139 թերթ և ժուռնալ:

Հաճախ գյուղում կարելի չէ հանդիպել ընտանիք, վորը դուրս է գրում վոչ թե մեկ, այլ յերկու թերթ: Լեբեդի գյուղում (Կուրսկի մարզի Ստարո-Ոսկոլսկի ռայոն) կա 460 անտեսութիւն: 1939 թ. դուրս է գրված 650 որինակ թերթ: Լենինի անվան գյուղատնտեսական արտելում ամեն մեկ ընտանիքին ընկնում է 2 որինակ թերթ: Այդ արտելի կուլտուրական ընկ. Դորոշեվը 1939 թ. թերթեր դուրս գրելու վրա ծախսել է 80 ռուբլի, ընկ. Պաուկովը՝ 116 ռուբլի:

Առ 1-ն հունվարի 1939 թ. ԽՍՀՄ-ում հրատարակվում էր 8550 թերթ, այդ թվում 4604 տպագիր թերթ հրատարակվում էր Փարբիկաներում ու գործարաններում, խորհրտեսութիւններում և ՄՏԿ-ներում: Ֆարբիկա-գործարանային մամուլը և կուլտուրական սլատի թերթերը կազմում են մոտ մեկ միլիոն անուն: ԽՍՀՄ-ում ռայոնական և քաղաքային թերթերի քանակը հասնում է 3393-ի: Խորհրդային Միութեան բոլոր ժողովուրդներն ունեն իրենց մայրենի լեզուներով թերթեր:

Յարական Ռուսաստանում ազգային լեզուներով թերթեր ու

գրքեր հրատարակելն արգելվում էր, դպրոցներում մայրենի լեզվով դասավանդելն արգելվում էր: «Յարական կառավարութիւնը ձգտում էր խեղդել արդային կուլտուրայի ամեն մի արտահայտութիւն, վարում էր վոչ-ուս ազգութիւնները բռնի «ուսացնելու» քաղաքականութիւն: Յարիզմը հանդես էր դալիս վորպէս վոչ-ուս ժողովուրդների դահիճն ու տանջողը»: («Համ. Կ(բ)Կ պատմութիւն, համառոտ դասընթաց», հայ. հրատ., էջ 7): Մինչև հեղափոխութիւնը Ռուսաստանում թերթեր հրատարակվում էր 24 լեզվով, իսկ ԽՍՀՄ-ում հրատարակվում է 70 լեզվով: 1913 թվին բոլոր լեզուներով, բացի ռուսերենից, հրատարակվում էր 84 թերթ, իսկ ԽՍՀՄ-ում, ԽՍՀՄ-ի ժողովուրդների լեզուներով, բացի ռուսերենից, լույս են տեսնում 2188 թերթ, այսինքն 26 անգամ ավելի:

\*\*\*

Բնակչութիւն մեջ բոլշևիկյան մամուլի տարածման պատվաբոր և պատասխանատու աշխատանքը հանձնարարված է կապի որդաններին:

Այդ առթիվ առաջին վորոշումը կայացրել է ՌԽՖՍՀ Ժողովրդական Կոմիտեաների Խորհուրդը և ստորագրել է Վ. Ի. Լենինը դեռևս 1918 թվին: Այս դեկրետի մեջ Վ. Ի. Լենինը մատնանել է փոստային ապարատը մամուլի տարածման գործի մեջ լայնորեն ներգրավելու անհրաժեշտութիւնը:

Կապի ժողովրդական կոմիտարիատն ունի ձեռնարկութիւնների ճյուղավորված ցանց և քաղաքային ու գյուղական փոստատարները մի հսկա բանակ, վորոնք տարածում ու տեղ են հասցնում բոլշևիկյան մամուլը:

Այս դասախոսութիւն նպատակն է հենց՝ ծանոթացնել կապի աշխատողներին բոլշևիկյան մամուլի տարածման մի քանի ձևերի և մեթոդների հետ:

## ԱՌԱՋԻՆ ԹԵՄԱ

### ՄԱՄՈՒԼԻ ԴԵՐԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կոմունիստական կուսակցութիւն մեծ առաջնորդներ՝ Լենինն ու Ստալինը բազմիցս և մանրամասն կերպով արտահայտվել են սոցիալիստական շինարարութիւն ասպարեզում մամուլի ունեցած դերի ու նշանակութիւն մասին: Այդ մտքերը ներկայացնում են հայացքների մի հոյակապ սխտեմ, վորը բնորոշում է սոցիալիստական շինարարութիւն բնագավառում մամուլի գրաված տեղը, նրա դերն ու նշանակութիւնը:

Ընկեր Ստալինի կլասիկ բնորոշման համաձայն մամուլը հանգիստում է բոլշևիկյան կուսակցութիւն ամենատեղ ու ամենահաջող գեները:

«Մամուլն այն միակ գործիքն է, վորի ողնութիւնը կուսակցութիւնն ամեն որ, ամեն ժամ խոսում է բանվոր դասակարգի հետ իր՝ նրան հարկավոր լեզվով: Կուսակցութիւն և դասակարգի միջև հոգեկան թերթ անցկացնելու այլ միջոցներ, այլ այդպիսի ճկուն ապարատ բնութիւն մեջ չկա» (ՌԿ(բ)Կ XII համագումարի սղադիր հաշվետվութիւն, ռուս. հրատ., էջ 52—53):

Բոլշևիկյան մամուլը մասսաների քաղաքական լուսավորութիւն ու դաստիարակութիւն չափազանց կարևոր միջոց է: Մեր թերթերը, ժուռնալներն ու գրքերն աշխատավորութիւնը դաստիարակում են կոմունիստական վորդով:

Մեր մամուլը լուսարանում է աշխատանքի լավագույն նմուշները, փոխանցում է առաջավորների փորձը, պարզաբանում է կուսակցութիւն ու կառավարութիւն բոլոր վորոշումներն ու ցուցումները և դրանց կատարման շուրջը մոբիլիզացիայի յետ յենթարկում մասսաներին: Դրա հետ միասին, բոլշևիկյան մամուլը միշտ, սխտեմատիկաբար և անողոք կերպով քննադատում է, առանց իրականութիւնը զարդարելու, առանց մասսաներից թագցնելու մեր աշխատանքի թերութիւններն ու թուլ

կողմերը, լայն մասսաներին սրբազանում և այդ թերություններին պատճառները և մատնանշում և դրանք ուղղելու յեղանակները, նպաստում և ինքնաքննադատության ծավալմանը:

Վ. Ի. Լենինը գրել և.

«Թերթը վոչ միայն կոլեկտիվ պրոպագանդիստ և կոլեկտիվ ագիտատոր է, այլ նաև կոլեկտիվ կազմակերպիչ է» (Յերկ. Ժողով., հատ. IV, ուսս. հրատ. էջ 111):

Յեզ իսկապես, սոցիալիստական շինարարության բոլոր ետապներում բոլշևիկյան մամուլը կատարել և կատարում է հոկայական կազմակերպչական դեր, աշխատավորության միլիոնավոր մասսաներին դաստիարակելով և համայնաբերով Լենինի—Ստալինի մեծ կուսակցության գլխավոր գծի համար մղվող պայքարում:

Գաղաքացիական պատերազմի ժամանակ, յերբ Խորհրդային յերկիրը հետ եր մղում բազմաթիվ թշնամիներին, կուսակցությունն իր մամուլի միջոցով կոչ ևր անում բանվորներին ու գյուղացիներին պաշտպանել խորհրդային իշխանությունը, և տասնյակ, հարյուր—հազարավոր աշխատավորներ արձագանգում էին կուսակցության կոչին, գնում էին ռազմաճակատ և պայքարում էին, չխնայելով իրենց կյանքը: Բոլշևիկյան մամուլը գործում էր վոչ միայն թիկունքում, ողնելով հեղափոխության մարտիկներին, այլ ուղեկցում էր նրանց նաև ռազմաճակատում, հանդես գալով վորպես շարժական տպարաններում տպագրվող ճակատային թերթեր, թուղցիկներ և այլն: Իստերիկենցիայի ու բուրժուական—կալվածատիրական, սպիտակ—գվարդիական հակահեղափոխության ջախջախման գործում այդ թերթերի կատարած դերը չափազանց խոշոր է յեղել:

Իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների հետևանքով քայքայված տնտեսությունը վերականգնելու տարիներին, բոլշևիկյան մամուլն անշեղորեն հանդես եր գալիս կուսակցության լողուններն իրականացնելու համար մղվող պայքարում:

Յերբ կուսակցությունը վերականգնման շրջանն ավարտելուց հետո առաջ քաշեց յերկրի ինդուստրացիան լողունքը, բոլշևիկյան մամուլն այդ լողունքը տարավ դեպի աշխատավորության լայն մասսաները: Կուսակցության ղեկավարությամբ մամուլը հակայական դեր խաղաց գործարաններում ու ֆարրիկաներում:

սոցիալիստական լայն մրցակցություն կազմակերպելու և հարգվածային բրիգադների շարժումը ծավալելու բնագավառում:

Բոլշևիկյան մամուլը նույն դերը խաղաց, յերբ կուսակցությունն առաջ քաշեց գյուղատնտեսության կոլեկտիվացման լողունքը: Կոլեկտիվացմանն ոժանդակելու նպատակով այդ կոլեկտիվացումն իրագործելու պրոցեսում ստեղծվեցին շրջանային, ՄՏ կայանների, խորհրտեսությունների հազարավոր նոր թերթեր: Աճեց կոլտնտեսային պատի թերթերի հոկայական ցանցը:

Մամուլը կոլտնտեսային գյուղացիությանը մորթիլիցացիայի յենթարկեց պայքարելու կոլտնտեսությունների կազմակերպական—տնտեսական ամբարցման համար, անշեղորեն կիրառելու գյուղատնտեսական արտելի Կանոնադրությունը, պայքարելու կուլտուրական և ունևոր կյանքի համար: Մամուլն իր նշանաբանը դարձրեց տարեկան 7—8 միլիարդ փութ հացահատիկ արտադրելու ստալինյան լողունքը և մորթիլիցացիայի յենթարկում մասսաներին այդ խնդիրն ամենաարագ կերպով իրագործելու համար:

Բոլշևիկյան մամուլը խոշոր դեր խաղաց ստալինյան յերկրորդ հնգամյակը ժամկետից շուտ կատարելու համար մղվող պայքարում:

Թերթերը, ժուռնալները, ապա նաև գրքերը արագորեն տարածեցին գործարաններում, քաղաքներում ու կոլտնտեսություններում մեր յերկրի առաջավոր մարդկանց՝ անխափառ մուրճի վարպետ՝ Ալեքսեյ Ստախանովի, Գորկու Մոլոտովի անվան ավտոմորթիլային գործարանի դարբին՝ Բուսիգինի, Իվանովոյի մանածագործ՝ Վինոգրադովաների, առաջին անվանի կոլտնտեսուհի—հինգհարյուրական, մեկ հեկտարից 500 ցենտներից ավելի շաքարի ճակնդեղ հավաքող Մարիա Դեմչենկոյի և սոցիալիստական աշխատանքի ուրիշ շատ ետուղիասանների փորձը:

Խոշոր է մամուլի դերը խորհրդային ինտելիգենցիայի կազմերի դաստիարակության գործում: Մամուլը վեր և հանել և վեր է հանում այն մարդկանց, վորոնք դիտության, տեխնիկայի, արվեստի ասպարեզում ցուցաբերած իրենց անձնվեր աշխատանքով հռչակում ու մեծարում են մեր սքանչելի հայրենիքը:

Մեր յերկրի կյանքում խոշորագույն քաղաքական դեպք հանդիսացավ ԽՍՀՄ Ստալինյան Սահմանադրության քննարկումն ու ընդունումը, ինչպես նաև նոր Սահմանադրության համաձայն, ԽՍՀՄ—ի Գերագույն Խորհրդի և միութենական ու ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրություն—

ները: Կուսակցութիւնը մամուլի միջոցով կազմակերպեց Ստալինյան Մահմանադրութեան նախագծի ամենալայն քննարկում: Այդ քննարկմանը մասնակցեցին միլիոնավոր մարդիկ. խորհրդային ժողովրդի բարոյա-քաղաքական միասնութիւնը փայլուն կերպով ապացուցւեց ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի և միութենական ու ավտոնոմ հանրապետութիւնների Գերագույն Խորհուրդների ընտրութիւնների ժամանակ կոմունիստների և անկուսակցականների ստալինյան բլոկի հաղթանակով:

Մամուլն ակտիվորեն մասնակցում էր կուսակցական ու պետական ապարատի բոլոր ողակները Փաշլոյմի տրոցիկստական-բուխարինական ու այլ դործակալներէից մաքրելու ասպարեզում կուսակցութեան կատարած հսկայական աշխատանքին: Կուսակցութեան ոժանդակութեամբ մերկացվեցին նաև մի քանի թերթերի խմբագրութիւններում յեղած թշնամու բները: Խմբագրութիւնները յեկան նոր մարդիկ, բանթղթակիցներ, գյուղթղթակիցներ, վորոնք անասհման նվիրված են կուսակցութեանը, խորհրդային հայրենիքին և մեծ Ստալինին:

Մամուլն ակտիվորեն մասնակցել է կուսակցութեան այն պայքարին, վոր նա մղում էր շատ աշխատողների քաղաքական անհոգութեան և բացբերանութեան դեմ, կուսակցական և անկուսակցական բոլշևիկներէի զաղախարական դաստիարակութեան հսկայական աշխատանքներին և յերկրի տնտեսական ու կուլտուրական կյանքի բոլոր բնագավառներում յեղած վնասարարութեան հետևանքները վերացնելու գործին:

Կուսակցութեան և մեր ամբողջ յերկրի զաղախարական կյանքում խոչորագույն դեպք հանդիսացավ 1938 թվին «ՀամԿ(բ)Կ պատմութեան համառոտ դասընթացի» լույսընծայումը, մի զերք, վորը կազմվել է ընկեր Ստալինի անմիջական մասնակցութեամբ: ««ՀամԿ(բ)Կ պատմութեան համառոտ դասընթացի» կապակցութեամբ կուսակցական պրոպագանդայի դրվածքի մասին» ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի այնուհետև հրատարակած վորոշման մեջ ասվում է, թե «մարքսիզմի-լենինիզմի պրոպագանդայի գործում գլխավոր, վճռական դերը պետք է հանդիսանա մամուլը՝ ժուռնալները, թերթերը, բրոշյուրները...»:

Այսպիսով, մամուլի վրա դրված է խոչորագույն խնդիր, այն է՝ զինել մեր կարգերը բոլշևիզմով:

Ստալինյան յերրորդ հնգամյակում մամուլի դերն է՛լ ամփոփ յե աճում: Մամուլը կուսակցութեան XVIII համագումարի վորո-

շումների մասսայականացման ամենաուժեղ միջոցն է: Մամուլը մասսաներին մորիլիզացիայի յե յենթարկում կատարելու և գերակատարելու յերրորդ հնգամյակի պլանը, լայնացնում ու ամրացնում է համաժողովրդական աշխատանքային վերելքը, մասսաների ստեղծագործական նախաձեռնութիւնը, կազմակերպում է Ստալինյան Յերրորդ Հնգամյակի անվան սոցիալիստական մրցակցութիւնը, կուսակցութեան ղեկավարութեամբ մասսաներին տանում է դեպի ներկա ետապում ԽՍՀՄ-ի համար տնտեսական կարևորագույն խնդրի, այն է՝ կապիտալիստական առաջավոր յերկրներին տնտեսական տեսակետից հասնելու և անցնելու խնդրի իրագործումը: Բոլշևիկյան մամուլը ակտիվորեն մասնակցում է աշխատավորութեան կոմունիստական դաստիարակութեան գործին, հիշելով, վոր ԽՍՀՄ-ի զարգացման նոր ետապում, սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու շրջանում, մասսաների կոմունիստական դաստիարակութեան խնդիրը վճռական խնդիրն է հանդիսանում: Մամուլն անդուլ և սխտեմատիկաբար պարզարանում է ժողովրդական մասսաներին, վոր Խորհրդային Միութիւնը, հաջողութեամբ կատարելով յերրորդ հնգամյակի պլանը, մի նոր հսկա քայլ կանի դեպի կոմունիզմի լիակատար հաղթանակը:

Մամուլը խոչոր աշխատանք է կատարում մեր մեծ հայրենիքի պաշտպանունակութիւնն ամրացնելու ասպարեզում, աշխատավորութեան լայն մասսաների մեջ զարգացնելով խորհրդային հայրենասիրութիւնը:

Սոցիալիստական կապի աշխատողները պետք է պարծենան այն գիտակցութեամբ, վոր նրանք հանդիսանում են բոլշևիկյան մամուլի տարածողները մեր յերկրի միլիոնավոր աշխատավորութեան մեջ, մի մամուլ, վորը կուսակցութեան ամենասուր և ամենաուժեղ գործիքն է:

Նրանք պետք է իրենք լավ իմանան և աշխատավորութեանը պետք է բացատրեն մեր մամուլի դերն ու նշանակութիւնը, նրանք պետք է կարողանան իրենց կոլտնտեսութեան կամ շրջանի կյանքից վերցրած կոնկրետ որինակների հիման վրա ցույց տալ թերթերի հսկայական կազմակերպչական և պրոպագանդիստական դերը, պետք է բոլշևիկյան թերթերի ու ժուռնալների նոր ընթերցողներ ու բաժանորդներ ներգրավեն:



ՅԵՐԿՐՈՐԴ ԹԵՄԱ

ՄԱՍՈՒԼԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՐԿԱՎՈՐ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՄԵԼ

Լրագիրը, գերբը, ժուռնալն իրենց նպատակին հասած կլինեն այն ժամանակ, յերբ նրանք կհասցվին ընթերցողին: Հենց այդ ել իրագործվում է մամուլի տարածման միջոցով:

Մամուլի տարածումը տեխնիկական աշխատանք է: Մեր մամուլի տարածումը խոշոր քաղաքական դործ է: Այդպես եր սովորեցնում մեզ մեր կուսակցության մեծ առաջնորդ և կազմակերպիչ Վ. Ի. Լենինը, յերբ յերեսուներեք տարի սրանից առաջ ստեղծում եր բուլղարիկյան առաջին քերթը՝ «Искра»-ն, յերբ անձամբ ղեկավարում եր նրա տարածումը ղեկի դործարաններն ու Փարբիկաները, անձամբ կազմակերպում եր թղթակիցներին, կապ եր հաստատում և աշխուժ նամակագրություն եր վարում նրանց հետ: Այդպես է սովորեցնում մեզ նաև ընկեր Ստալինը:

Կուսակցությունն ու կառավարությունը մամուլի տարածման գործին միշտ խոշոր ուշադրություն են դարձրել և այժմ էլ դարձնում են: Վլադիմիր Իլյիչը խիստ հետաքրքրվում եր թերթերի և ժուռնալների տարածման հարցով: Իր աշխատությունների մեջ նա բազմիցս շոշափել է այդ հարցը:

Դեռ 1921 թվին, յերբ թղթի պակասության պատճառով հաճախ թերթերը չէին բավականացնում, Լենինն առանձնապես համառ կերպով եր ընդգծում այն յերևույթի անթույլատրելիությունը, յերբ չափազանց քիչ թերթ եր հանում մասսայական ընթերցողին, և չափազանց շատ թերթ եր մնում դանազան հիմնարկություններում:

Բնութագրելով Յենտրոպեչատի աշխատանքը, Լենինը գրում եր, վոր

«Չարմանալիորեն քիչ են փակցվող, այսինքն ամենի վրա լայն մասսաների համար նախատեսված թերթերը: Չարմանալիորեն շատ են մայրաքաղաքային «հիմնարկու-

թյուններին» և նմաններին ընկնող թերթերը» (Յերկրի ժողովածու, ռուս. հրատ., XXVI հատոր, էջ 165):

Այժմ, ստալինյան հնգամյակների հաջողությունների չնորհիվ, յերկիրը համեմատաբար ավելի շատ թուղթ է ստանում, վորը և ապահովել է թերթերի ու ժուռնալների շատ ավելի բարձր տիրաժներ, բայց թղթի դործարանների արտադրանքի աճումը առայժմ դեռ հետ է մնում մասսաների կուլտուրական մակարդակի զարգացումից: Մեր հրատարակությունների նույնիսկ աճած տիրաժները դեռևս բավական չեն, վորպեսզի լիովին բավարարեն խորհրդային ժողովրդի կուլտուրական նոր պահանջները, խորհրդային ընթերցողի՝ գրքի, թերթի և ժուռնալի կարիքները:

Այս պատճառով թերթերի տարածման վերարևոյալ Լենինյան ցուցումները մեզ համար մինչև այժմ էլ պահպանում են իրենց նշանակութունը:

Պետք է ասել, վոր նույնիսկ այժմ էլ հրատարակությունների դեռ զգալի մասը կուտակվում է հիմնարկություններում, ձեռնարկություններում և կուլտուրականությունների վարչություններում: Իսկ ընթերցողն այդ պատճառով հնարավորություն չի ունենում բաժանորդագրվել թերթերին և ժուռնալներին:

Մամուլի տարածումը, այն անհատ բաժանորդին, ընթերցողին հասցնելը դեռևս շատ տեղերում վատ է դրված:

Մինչև այժմ էլ, որինակ, հանդիպում են այնպիսի փաստեր, յերբ կուլտուրական ժողովներում վորոշում են հանում թերթերին «բոլորով» բաժանորդագրվելու մասին: Այս դեպքում հրատարակությունների բաժանորդագրին սովորաբար կուլտուրական վարչությունը պահում է կուլտուրականներին աշխորերի դիմաց հասանելիք գումարներից: Այս հանգամանքը կարող է արդարացի բողոքներ առաջացնել կուլտուրականների կողմից: Դեռ ավելին, բաժանորդագրության նման բյուրոկրատիկ ձևի հետևանքով թերթերը և ժուռնալները, վորպես կանոն, դուրս են գրվում կուլտուրական վարչության հասցեյով և բաժանորդների իրենց աները չեն հասցվում:

Տեղի յեն ունենում նաև փորձեր, յերբ ընթերցողին ստիպում են բաժանորդագրվել այնպիսի թերթերի, կամ այնպիսի ժուռնալների, վորոնք նրան հարմար չեն դալիս, չեն հետաքրքրում:

Ահա թե, որինակ, ինչ է պատմում Չերնիգովի մարզային

կապի վարչության մամուլի տարածման և առաքման բաժնի հրահանգի՝ ընկ. Կովալը. «Գրեմյաչի շրջանում մենք հանդիպեցինք աղաղակող խախտումներին: Բաժանորդագրության ժամանակ հաճախ տառաջիորեն կորսնտեսականների վիզն են փաթեթում այնպիսի թերթեր, ինչպես են «Машиностроение», «Гудок», «Московский транспортник», «Легкая индустрия», «Пищевая индустрия» և այլն:

Սակայն, Գրեմյաչի մամուլի տարածման բաժնի պետը փորձում էր ծածկել այդ խախտուակ փաստը: Նա հայտարարեց.

— Մենք ընդունում ենք այն հրատարակությունները բաժանորդագրությունը, վորպիսին պահանջում է բաժանորդը...

Բայց նրան մերկացրեց կոլտնտեսական Պողոթնին: Նա յեկեկ էր բողոքելու պետին «Пищевая индустрия» թերթը չստանալու մասին:

Մենք հեռաքրքրվեցինք, թե ինչու կոլտնտեսական ընկ. Պողոթնին հատկապես այդ թերթն է դուրս գրել:

— Շատ պարզ. յեկավ փոստատարը և սկսեց համոզել, վոր յես այդ թերթը դուրս գրեմ,— պատմում է ընկ. Պողոթնին:

— Ձե, ասում եմ, լավ կլինի այնպիսի թերթ գրես, վորտեղ կոլտնտեսական կյանքի մասին են գրում:

Այն ժամանակ փոստատարը հայտարարեց՝ «Բաժանորդագրվիր «Պիչչեվայա ինդուստրիա» թերթին, թե չե վոչ մի թերթ էլ չեմ տա»: Դե յես ել բաժանորդագրվեցի:

Այդպիսով ընկ. Պողոթնու գլուխն են կապում մի թերթ, վորը նրան հարկավոր չե և այն ել նրան չեն հասցնում:

Բաժանորդագրության քարտում հայտնի չե թե ինչու ջնջել է յին նրա ազգանունը և գրել՝ «կոլտնտեսականներին»:

Պարզվում է, վոր «Պիչչեվայա ինդուստրիա» թերթին Գրեմյաչում բաժանորդագրել են նաև ուրիշ կոլտնտեսականների: Կազմել են ընդհանուր ցուցակ, ստորագրել են տվել, իսկ դրամը դանձել են կոլտնտեսության վարչության միջոցով:

Խիչիչի գյուղում կոլտնտեսականների համար փոստատարը դուրս է գրել «Московский транспортник» թերթը:

200 կոլտնտեսական Գրեմյաչում և 160 կոլտնտեսական Խիչիչիում դուրս են գրել արդյունաբերական տարբեր ճյուղային թերթեր: Բոլոր այդ բաժանորդներին պարզապես խաբել են, խոստանալով տալ նրանց կենտրոնական թերթեր, սակայն չեն բացատրել, թե հատկապես ինչ թերթեր:

Ինչպե՞ս է այդ պատահել: Ինչո՞ւ նրանց համար անհետաքրքիր, արդյունաբերության տարբեր ճյուղերին պատկանող թերթերի փոխարեն կոլտնտեսականների մեջ չեն տարածել, որինակի համար, տեղական շրջանային թերթը: Պարզվում է, վոր տեղական շրջանային թերթը ավելի եժան է, քան կենտրոնականը: Իսկ մամուլի տարածման շրջանային աշխատողները ձգտել են ավելի շատ բաժանորդագրություն հավաքել արդյունաբերական ճյուղային այդ թերթերի համար, վորպեսզի կատարած լինեն ֆինանսական պլանը:

Բաժանորդների որինական իրավունքները խախտվել են նաև Նալչիկում (Կարբրդինո-Բալխարական ԱՍՄՀ): Ընկ. Կունակովին, վորը բաժանորդագրվել էր «Правда» թերթին 1938 թ. յերկրորդ կիսամյակի համար, թերթը հասցրել են միմիայն մինչև սեպտեմբերի 1-ը, իսկ այնուհետև բաժանորդագրությունը չեղյալ է հայտարարվել: Ընկ. Կովալենկոն (Պարկովի մարզի իրոտին գյուղ) բաժանորդագրվել է «Комсомольская Правда» թերթին, բայց նրան հանձնում էին «Комсомолец Украины» թերթը:

Մամուլի տարածման նման անպետք մեթոդների դեմ հարկավոր է ամենավճռական պայքար մղել: Տարածման այսպիսի «մեթոդները» քաղաքական վնասակարությունը միանգամայն ակնհայտ է:

Ճիշտ է, թղթի պակասության պատճառով մի քանի թերթերի տիրաժներ սահմանափակված են (լիմիտավորված են) և հնարավոր չի լինում այդ թերթերի բոլոր բաժանորդների պահանջները բավարարել: Թե ինչպես պետք է վարվել նման դեպքերում, ինչպես պետք է տարածել լիմիտավորված հրատարակությունները, այդ մասին մանրամասնորեն տես այս դասախոսության 5-րդ թեմայում: Համենայն դեպս պարզ է, վոր յեթե վոչ մի հնարավորություն չկա բավարարելու բաժանորդին նրա խնդրած (լիմիտավորվող) թերթով, ապա հարկավոր է նրա հետ միասին ուշադրությամբ մտածել, թե արդյոք ուրիշ ինչ թերթ է նրան ամենից շատ համապատասխան, և բաժանորդագրել նրան այդ թերթին: Սակայն չի կարելի բաժանորդի վիզը փաթաթել նրան չհարմարվող թերթ, կամ մի թերթ, վորին նա բոլորովին չի բաժանորդագրվել:

Մեր յերկրում միլիոնավոր աշխատավորության համար բոլընիկյան մամուլն ամենալավ ուսուցիչն ու բարեկամն է, նա աշ-

633  
39



խատալորութեան համար անհրաժեշտ է ինչպես հացը, ինչպես ջուրը:

Յեթե դեռևս պատահում են դեպքեր, յերբ այս կամ այն բանվորը, կոլտնտեսականը կամ ծառայողը թերթ չի կարդում, ապա այդ հաճախ առաջ է դալիս այն պատճառով, վոր նրանց խորհուրդ չեն տալիս, թե ինչ թերթերի և ժուռնալների, վորտեղ և ինչպես կարելի յե բաժանորդագրվել:

Բայց չե՞ վոր նրանցից յուրաքանչյուրն ունի իրեն հետաքրքրող հարցերը. մեկը, ասենք, կոլտնտեսութեան բրիգադիր է, նա ցանկանում է իմանալ, թե ինչպես ավելի լավ կարելի յե կազմակերպել աշխատանքը բրիգադում, մեկ ուրիշը հետաքրքրվում է անասնապահութեամբ, յերրորդը՝ դյուղատնտեսական մեքենաներով և այլն: Յեվ, իհարկե, յուրաքանչյուրին հետաքրքրում է, թե ինչպես է ապրում և աճում մեր յերկիրը, ինչ դեպքեր են տեղի ունենում արտասահմանում, ինչ նորութիւններ կան դիտութեան և տեխնիկայի բնագավառում և այլն:

Մամուլի տարածումը ճիշտ կազմակերպելու համար հարկավոր է ճանաչել իր ընթերցող-բաժանորդին, իմանալ, թե ինչով է նա զբաղվում, ինչպիսի հարցերով է նա հետաքրքրվում, և ինչ պահանջներ ունի: Պետք է կարողանալ առաջարկել նրան հասկապես այն թերթերը, վորոնք ամենից ավելի հասկանալի ու ոգտակար են նրա համար, վորոնք ավելի շատ կհետաքրքրեն նրան:

Մամուլը բոլշևիկյան պրոպագանդայի ու ազիտացիայի գործոն զենքն է: Այդ պատճառով դրա տարածումով մեզանում զբաղվում են վոչ միայն կապի աշխատողները, վորոնք կատարում են այդ գործի և տեխնիկական մասը (բաժանորդագրութիւն հավաքելը, պատվերների ձևակերպումը, մամուլի առաքումը), այլ և կուսակցական ու խորհրդային բոլոր կազմակերպութիւնները: Ծնորհիվ այն բանի, վոր կապի աշխատողները մամուլի տարածման վերաբերող իրենց աշխատանքներում կոնկրետ աջակցութիւն ու ղեկավարութիւն են ստանում կուսակցական ու խորհրդային կազմակերպութիւնների և կոլտնտեսային հասարակայնութեան կողմից, նրանք հնարավորութիւն ունեն մամուլը հաջողութեամբ տարածել մեր անծայրածիր յերկրի աշխատավորութեան մեջ:

Ահա թե այս մասին ինչ է պատմում, որինակ, Սեյտլերի՝ մամուլի տարածման տեսակետից առաջավոր՝ ռայոնի աշխատակից ընկ. Դեմիդովը (Ղրիմի ԱՍՍՀ) .

«Յեա աշխատում եմ կուսակցական կազմակերպութեան ղեկավարութեամբ և նրա հետ մշտական կապ եմ պահպանում: Մամուլը լավագույն ձևով տարածելու ուղղութեամբ տարվող մասսայական աշխատանքի վերաբերյալ բոլոր միջոցառումների մասին յես նախապես մտածում եմ ինքս, ապա համաձայնեցնում եմ կուսակցական կազմակերպութիւնների հետ և շարունակ նրանցից ստանում եմ կոնկրետ ոգնութիւն»:

Այն մասին, թե ինչպես են կուսակցական կազմակերպութիւններն ոժանդակում կապի աշխատողներին, գրում է նաև Մուրավական ԱՍՍՀ Կապի վարչութեան մամուլի տարածման և առաքման բաժնի պետ ընկ. Ստրիժակը .

«Մուրավայի աշխատավորութեան մեջ 1939 թվի պարբերական մամուլի տարածումը մենք սկսել ենք դեռևս հոկտեմբերին: Այս աշխատանքի ասպարեզում մեզ մեծ ոգնութիւն է ցույց տալիս ՌԻԿ(Բ)Կ Մուրավական մարզկոմը: Նրա ցուցումների հիման վրա, կուսակցութեան ռայոնական կոմիտեներն ամեն որ զբաղվում են թերթերի և ժուռնալների տարածման հարցով: Այդ ասպարեզում կապի աշխատողներին մեծ ոգնութիւն է ցույց տալիս նաև հասարակայնութիւնը»:

Հետաքրքիր է նաև ընկ. Վիկտորովի նամակը (Կրասնոդարի յերկրամաս, Ստեպնայա ստանիցա) .

«Մամուլի տարածման ասպարեզում կապի աշխատողներին մեծ աջակցութիւն են ցույց տալիս կուսակցական ու կոմյերիտական կազմակերպութիւնները: Նրանք հատուկ ընկերներ են առանձնացնում, վորոնք յուրաքանչյուր բրիգադում մամուլի մասին զեկուցումներ են ունենում, գրույցներ են անցկացնում, ոգնում են թերթերի ընթերցանութիւն կազմակերպելու և ապա բաժանորդագրութիւն են հավաքում: Չի լինում դյուղխորհրդի նախագահութեան և վոչ մի նիստ, կոլտնտեսութեան և վոչ մի ժողով, վորտեղ գործակալութեան վարիչ ընկ. Տերենտյովը մի քանի խոսք չասի մամուլի տարածման մասին: Նա ձգտում է, վորպեսզի և վոչ մի կոլտնտեսական ընտանիք չմնա առանց թերթ դուրս գրելու»:

Մամուլի տարածման գործին պետք է լայնորեն մասնակից դարձնել խորհրդային, կոլտնտեսական և կուսակցական ակտիվը, այն է՝ դյուղթղթակիցներին, կոլտնտեսական պատի թերթերի խմբկոմիտեների անդամներին, դյուղական ինտելիգենցիային (ուսուցիչներին, խրճիթավարներին, դյուղատնտեսներին, գրադարանա-

պետներին, բժշկական պերսոնալին, հաշվետարներին, խնայող-  
մարկղների աշխատողներին և այլն), թերթերի և ժուռնալների  
մշտական ընթերցողներին:

Դեղովակի (Բաշկիրական ԱՆՍՀ, Ֆեոդորովսկի ռայոն) կա-  
պի բաժանմունքի պետ՝ ընկ. Լիսենկոն պատմում է այն մա-  
սին, թե ինչպիսի խոշոր ոգնուլթյուն կարող են ցույց տալ մամու-  
լի տարածման գործում, որինակ, հին ընթերցողները, վորոնք  
իրենց անձնական փորձից գիտեն թերթեր և ժուռնալներ կարգա-  
լու ոգտակարուլթյան մասին:

«Հին ընթերցողները հետ յես սերտ կապ են պահպանում:  
Նրանք լավ են ոգնում ինձ մամուլի տարածման գործում: Ժո-  
ղովներում հին ընթերցողներն ագիտացիա յես մղում բաժանոր-  
դագրուլթյան ոգտին և մեծ աջակցուլթյուն են ցույց տալիս ինձ:

Մամուլի տարածման գծով իմ տարած աշխատանքի հիմնա-  
կան մեթոդը հասարակայնուլթյան հետ կապ ստեղծելն է: Ամեն  
մի հարմար առիթից ոգտովելով, կոլտնտեսականների բոլոր ժո-  
ղովներում ու խորհրդակցուլթյուններում, յես յեղուլթներ են ու-  
նեցել, հաշվետուլթյուն են արել իմ աշխատանքի մասին, պատ-  
ժել են մամուլի նշանակուլթյան մասին, ագիտացիա յես մղել  
թերթերին և ժուռնալներին բաժանորդագրուլթյուն համար»:

Հասարակայնուլթյան հետ սերտ կապ է պահպանում նաև  
փոստատար՝ Փ. Յելուտովը (Կուլբիչեվի մարզ, Սմիչլեյեվսկի  
ռայոն): Նա պատմում է.

«Նամակատարի պաշտոնում յես աշխատում են ուլթ տարուց  
ավելի և մամուլի վատ տարածող չեն համարուլթ: Իմ շրջանա-  
մասում յուրաքանչյուր ընտանիքում կան թերթերի բաժանորդ-  
ներ: Ժուռնալներ ել շատ են տարածել:

Յես սիրում են իմ աշխատանքը և այն կարևոր ու պատաս-  
խանատու աշխատանք են համարում: Չե՞ վոր տարածողի աշխա-  
տանքը քաղաքական խոշոր գործ է:

Հին բաժանորդներն ինձ մոտ հաշվի յես առնուլթ սուսն-  
ձին: Նրանց հետ սերտ կապ են պահպանում: Նրանք ինձ ոժան-  
գակում են տարածելու մամուլը, ներգրավելու նոր բաժանորդ-  
ներ:

Սերտ կապ են հաստատել նաև գյուղխորհրդի, կոլտնտեսու-  
լթյան վարչուլթյունների, ուսուցիչների, գյուղատնտեսների, կալ-  
թողային ընթերցողների և հասարակական ակտիվ աշխատողների  
հետ:

Յես ընթերցողների և նրանց բաժանորդագրուլթյան ժամկեա-  
ների ճիշտ հաշվառում են պահում և լավ գիտեն, թե նրանցից  
յուրաքանչյուրի բաժանորդագրուլթյան ժամկետը յերբ է վերջա-  
նում: Նախորդ հիշեցնում են յուրաքանչյուրին, թե յերբ է  
վերջանում բաժանորդագրուլթյան ժամկետը և յերբ պետք է բա-  
ժանորդագրուլթյունը նորոգել: Պատահում է, վոր այդ մոմեն-  
տին բաժանորդի մոտ ազատ դրամ չի լինում: Յես իմանում են,  
թե նա յերբ դրամ կունենա և նորից գալիս են նրա մոտ: Չեն  
հանգստանում, մինչև վոր բաժանորդագրուլթյունը չեն նորոգում:

Նախքան իմ շրջանամասում շրջագայելը յես ծանոթանում են  
ստացուլթ թերթի բովանդակուլթյան հետ և կարևոր նորուլթյուն-  
ները պատմում են կոլտնտեսականներին ու կոլտնտեսուհիներ-  
ին:

Այս բոլորը կարող է և պետք է կատարի մամուլի յուրա-  
քանչյուր տարածող»:

Կան կապի աշխատողներ, վորոնք յերկար տարիներ գրադ-  
վում են մամուլի տարածման գործով: Նրանք պատմում են, թե  
ինչպես թերթեր և ժուռնալներ կարգալու շնորհիվ բաժանորդ-  
ներն աստիճանաբար դարգանում են և աճում են նրանց պահանջ-  
ները: Միքանի գեպերում, յերբ բաժանորդները գնալով ավելի  
դրագետ են դարձել և նրանց մտահորիզոնն ընդարձակուլթ է,  
կապի աշխատողները խորհուրդ են տվել նրանց մեկ հրատարա-  
կուլթյունից անցնել մեկ ուրիշ հրատարակուլթյան ընթերցման:

Մամուլի տարածման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել  
ընթերցողի պահանջների անուր: Կապի աշխատողները պետք է  
աստիճանաբար իրենց բաժանորդներին ընտելացնեն վոչ միայն  
թերթեր, այլև ժուռնալներ ու գրքեր կարգալուն:

Պետք է ուշադրուլթյուն դարձնել նաև ազգային մամուլի  
տարածմանը՝ այն ռայոններում, վորտեղ, որինակ, ուսսական,  
ուկրաինական կամ բելուուսական բնակչուլթյան շարքերում կան  
նաև այլ ազգուլթյուններ:

Յերբեմն այս կամ այն ազգուլթյան ներկայացուցիչներն ապ-  
րում են վոչ թե ամբողջ գյուղերով, այլ մի քանի ընտանիքներից  
բաղկացած խմբակներով՝ զանազան գյուղերում: Նաև այս դեպ-  
քում մամուլի տարածողը պետք է ոժանդակի նրանց մայրենի  
լեզուով թերթեր և ժուռնալներ դուրս գրելու, խնամք ցուցաբե-  
րելով ամեն մի ընթերցողի նկատմամբ:

Մեծ և կարևոր խնդիր է՝ կոլտնտեսուհիների համար հրա-

տարակի՞ող հատուկ ժուռնալների տարածումը, որինսկ «Крестьянка» կենտրոնական ժուռնալը և մի քանի մարզերում կանանց համար հրատարակի՞ող ուրիշ ժուռնալներ: Ձի կարելի մուսանալ, վոր մեր յերկրում կանանց դերը չտարազանց մեծ է:

Կանանց համար հրատարակի՞ող ժուռնալների տարածումը կապի աշխատողների պարտականութիւնն է: Այդ ժուռնալների մշտական ընթերցումը նպաստում է կոլտնտեսուհիների կուլտուրական և քաղաքական զարգացմանը, զինում է նրանց սոցիալիստական գյուղատնտեսութեան կին ստախանովականների փորձով:

Ահա թե ինչու կանանց համար հրատարակի՞ող մեր ժուռնալների տարածումը բացառիկ կարևոր քաղաքական նշանակութիւն ունի:

Ընդամին առաջին հերթին պետք է հենկել այդ ժուռնալների հին ընթերցողների և առաջալոր կոլտնտեսուհիների վրա և նրանց ոժանդակութեամբ ավելացնել այդ ժուռնալների բաժանորդուհիների թիւը:

Բերենք «Крестьянка» ժուռնալի տարածման ասպարեզում Ղրիմի ԱՆՍՀ կապի աշխատող ընկ. Ռոմանովի փորձի վերաբերյալ պատմվածքը՝

«Նամակատարին ոգնելու համար մեր գյուղում խորձիթվարի հետ միասին հին ընթերցողներից կազմակերպեցի հասարակական տարածողների յերեք խմբակ, բոլորին բաժանորդաթերթիկներ և դրացուցակներ բաժանեցի և տվի նաև հրատարակութիւններից «Крестьянка» ժուռնալի վորպես նմուշ ստացված համարներից:

Կոմյերիտականները զրուցելով կոլտնտեսուհիների հետ, ցույց եյին տալիս նրանց «Крестьянка» ժուռնալը և խորհուրդ եյին տալիս բաժանորդագրվելու, նրանք հաղորդում եյին, վոր այդ ժուռնալը վորպես հավելված տալիս է նաև վիկրոյկաներ (հազուստեղենի ձևվածք) և նկարների գունազարդ պատճեններ: Միքանի խորձիթներում կոմյերիտուհիները ժուռնալի ընթերցում եյին կազմակերպում:

Առանձին հետաքրքրութիւն առաջ բերին յերեխաների խնամքի և մոր առողջութիւնը պաշտպանելու մասին ժուռնալում գետեղված հոդվածը: Հետևանքն այն յեղավ, վոր շատերը բաժանորդագրվեցին այդ ժուռնալին»:

Այնտեղ, վորտեղ մամուլի տարածման մեծ է կարևոր գործով գյուղում զբաղվում են կապի ստախանովական աշխատողները, ահտիվ կոլտնտեսականները, մեր առաջալոր խորհրդային ժար-

դիկ, այնտեղ, վորտեղ մամուլի տարածողները հասկանում են այդ գործի քաղաքական և կուլտուրական նշանակութիւնը, այնտեղ գործի հաջողութիւնը միշտ ապահովված է և մամուլը հասցվում է մինչև ընթերցողների լայն մասսաները:

Ահա թե ինչ է գրում Իվանովոյի մարզի Չաոգյորյե գյուղից մամուլի հասարակական տարածող ընկ. Նովիկովը.

«Թերթեր, ժուռնալներ և գրքեր կարգալու սերն իմ մեջ զարգացավ դեռևս գարոցական հասակից: Այժմ ել յես մեծ սիրով եմ կարդում:

Ինպի ընթերցանութիւնն ունեցած այս սերը յես պատվաստում եմ իմ կոլտնտեսական ընկերներին: Յես իմ առաջ խնդիր եմ գրել՝ աշխատել, վորպեսզի յուրաքանչյուր դրագետ կոլտնտեսական և կոլտնտեսուհի գուրս գրի թերթեր և ժուռնալներ:

Մկրդում յես զեկուցումով հանդես յեկա կոլտնտեսութեան ակտիվի ժողովում և պատմեցի մամուլի նշանակութեան մասին: Հենց այդտեղ ակտիվիստներից շատերը բաժանորդագրվեցին թերթերի և ժուռնալների: Իրանից հետո յես զեկուցում կարդացի կոլտնտեսութեան ընդհանուր ժողովում, իսկ այնուհետև իմ աշխատանքները տեղափոխեցի բրիգադները: Բրիգադներում զրուցներ եյի կազմակերպում, բացատրում, տեղեկանքներ ու խորհուրդներ եյի տալիս, թե ինչ գուրս գրել: Նոր բաժանորդներ գրավելով, յես նրանց կարգալու և ծանոթանալու համար տալիս եյի ժուռնալների գանազան համարներ, ծանոթացնում եյի նրանց բովանդակութեան հետ և առանձնապես կարևոր հոդվածների բարձրաձայն ընթերցում եյի կազմակերպում:

Յես դիմում եմ նաև հին բաժանորդների ոժանդակութեան: Իմ խնդրանքով նրանք պատմում եյին, թե ինչ են գրում թերթերում ու ժուռնալներում, թե ինչ ոգուտ են տալիս նրանք և այլն:

Իմ հավաքած բոլոր բաժանորդագրութիւնները յես հանձնում եմ փոստի բաժանմունքին և հետևում, թե արդյոք բոլոր բաժանորդները կանոնալոր ձևով ստանում են թերթեր և ժուռնալներ, թե վոչ: Յեթե թյուրիմացութիւններ են ծագում, անձամբ գնում եմ փոստ և պարզում, թե բանն ինչումն է: Հետևում եմ յուրաքանչյուր բաժանորդի բաժանորդագրութիւնների ժամկետներին և ժամկետը լրանալուց կես ամիս առաջ հիշեցնում եմ այդ մասին բաժանորդին: Յես միշտ աշխատում եմ, վոր բաժանորդագրութիւնների ժամկետները յերկարատև լինեն (մեկ տարով, կես տարով): Տարեկան բաժանորդագրութիւնների դեպ-

ըում թերթերն ու ժուռնալները ստացվում են կանոնավոր և ան-  
ընդհատ»:

\* \*  
\*

Այն բոլոր փաստերը, վոր մենք այստեղ բերինք, վկայում  
են, վոր դյուղական հասարակայնությունը կապի աշխատողներին  
մեծ ոժանդակություն է ցույց տալիս մամուլի տարածման գոր-  
ծում: Միայն թե հարկավոր է, վոր իրենք կապի աշխատողները  
ակտիվ լինեն, աշխատեն բուլլետիստներն, վորդեորված, շարունակ  
կոնտակտ պահեն տեղական կուսակցական և խորհրդային կազմա-  
կեպությունների հետ:

Մեծ մասն են հասցնում գործին այն մարդիկ, վորոնք մա-  
մուլի տարածման աշխատանքն ինքնահոսի յեն մատնում: Փաս-  
տերը ցույց են տալիս, վոր այնտեղ, վորտեղ կապի աշխատողնե-  
րը ձեռքերը ծալած նստում ու սպասում են, վոր բաժանորդն ին-  
քը դա նրանց մոտ, այնտեղ շատ կոլտնտեսականներ և կոլտնտե-  
սուհիներ մնում են առանց իրենց անհրաժեշտ թերթերի ու ժուռ-  
նալների:

Իսկ թողնել նրանց այժմ առանց թերթի՝ այդ նշանակում է  
չոժանդակել կոմունիստական կուսակցությանն ու խորհրդային  
իշխանությանն այն հսկայական աշխատանքներում, վոր նրանք  
տանում են կոլտնտեսություններն ամբացնելու և աշխատավորու-  
թյան կուլտուրական-քաղաքական մակարդակը բարձրացնելու  
ասպարեզում:

Այստեղից պետք է յեզրակացնել, վոր մամուլի տարածումը  
հարկավոր է կազմակերպել, հարկավոր է պայքարել մամուլը  
բաժանորդին հասցնելու համար:

Մամուլի տարածմամբ պետք է զբաղվել տարին բոլոր՝  
ամառն ու ձմեռը, աշնանը և դարնանը: Իժբախտաբար կապի մի  
քանի աշխատողներ գեուես այն կարծիքին են, թե իբր դարնանը  
և ամառը, դաշտային դյուղատնտեսական աշխատանքների շրջա-  
նում, կարելի չէ մամուլի տարածման աշխատանքները թուլաց-  
նել, քանի վոր կոլտնտեսականները զբաղված են դաշտերում:

«ժամանակ չունի նա իբր թերթեր կարդալու»՝ այսպես են  
դատում վոր բարով տարածող կոչվողներից մի քանիսը:

Այդ սխալ և վտանգավոր տեսակետ է: Կոլտնտեսականը տա-  
րին բոլոր ցանկանում է և կարող է թերթեր կամ ժուռնալներ  
կարդալ: Միայն թե հարկավոր է թերթերը նրա աշխատանքի  
տեղը հասցնել:

Վերցնենք, որինակ, ցանքի և բերքահավաքի շրջանը: Կոլ-

տնտեսականներից շատերը դանվում են դյուղից դուրս, իրենց  
բնակարանից հեռու՝ դաշտում: Իհարկե, կապի այն աշխատողը,  
վորը դյուղի շրջակայքից վտար դուրս չի դնում, դաշտում, բըր-  
գազներում չի լինում, նա բաժանորդագրություն չի կարող հա-  
վաքել, կամ կհավաքի ավելի քիչ, քան ձմեռը: Բայց այդ պար-  
զապես տեղի կունենա այն պատճառով, վոր դաշտային աշխա-  
տանքների ժամանակ կոլտնտեսականներից շատերին տանը չի  
գտնի:

Ցանքը, բերքահավաքը, պետության հանդեպ ունեցած պար-  
տավորությունների կատարումը դյուղատնտեսության մեջ ամե-  
նապատասխանատու շրջաններն են: Կապի աշխատողները պար-  
տականությունն են՝ նպաստել այդ աշխատանքները հաջող կատա-  
րելուն: Հետևաբար, կապի աշխատողը պետք է հոգա այն մասին,  
վոր յուրաքանչյուր կոլտնտեսական, յուրաքանչյուր կոլտնտեսու-  
հի ամեն որ դիտենա այն ամենը, ինչ գրում են թերթերում, վոր-  
պեսզի նրանք իմանան, թե ինչպես են աշխատում առաջավոր կոլ-  
տնտեսությունները, դյուղատնտեսության լավագույն ստախանո-  
վականները, վորպեսզի նրանց որինակին հետևելով, նրանք իրենց  
մոտ ևս կարողանան որինակելի ձևով դնել գործը: Ահա թե ին-  
չու անհրաժեշտ է նախորդ, մինչև աշխատանքներն սկսվելը,  
կոլտնտեսականներին ապահովել թերթերով:

Կապի մի քանի աշխատողներ մամուլի տարածումը սկսում են  
միայն ամուլա վերջին: Այդ էլ ճիշտ չէ: Մամուլը պետք է տա-  
րածել ամբողջ ամսվա ընթացքում ամեն որ: Այսպիսի կարգը  
հնարավորություն է տալիս սխտեմատիկաբար որեցոր մասսայա-  
կան աշխատանք ծավալել բնակչության մեջ և բաժանորդագրու-  
թյուն հավաքել առանց ցնցումների ու թափահարումների, ինչ-  
պես այդ հաճախ անում են կապի այն աշխատողները, վորոնք  
միմիայն ամսի վերջին են սկսում տարածել մամուլը:

Շատ կարևոր է մամուլի տարածման ժամանակ նաև ազիտա-  
ցիա տանել յերկարատև բաժանորդագրության համար: Բնակչու-  
թյանը պետք է շարունակ բացատրել, վոր յերկարատև բաժանոր-  
դագրությունը (մեկ տարով կամ կես տարով) ազատում է թեր-  
թերի ու ժուռնալների անընդհատ և ժամանակին տեղ հասնելուն:

Յերկարատև բաժանորդագրությունը հեշտացնում է նաև կա-  
պի սզարատի աշխատանքները, քանի վոր կարիք չի լինում ամեն  
ամիս արտագրելու տալոնային քարտերը և բաժանորդագրության  
այլ փաստաթղթերը:

ՅԵՐՐՈՐԴ ՓԵՄՍ.

ԻՆՉԻՑ ՍԿՍԵԼ ՄԱՍՈՒԼԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Վորպեսդի իր ուսուցում մարդ կարողանա մամուլը հաշտ-  
դուլթյամբ տարածել, պետք է այդ ուսուցումը շատ լավ ցուցումնա-  
սիրել:

Կապի յուրաքանչյուր աշխատող, վորը զբաղվում է մամուլի  
տարածումով, պետք է լավ ծանոթ լինի իր գործունեյության  
ըրջանի հետ: Նա պետք է գիտենա, թե ինչ բնակչության է նա  
սպասարկում՝ կոլտնտեսականներ են դրանք, գործարանային  
բանվորներ, թե ծառայողներ. սպասարկվող բնակչության թիվը,  
ինչպիսի՞ հիմնարկներ, ձեռնարկություններ, ուսումնական հաս-  
տատություններ կան այդ ուսուցում, ինչպիսի ազգային կազմ  
ունի բնակչությունը:

Առանց այս իմանալու չի կարելի վորոշել, թե առաջին հեր-  
թին ինչպիսի թերթեր և ժուռնալներ պետք է առաջարկել իր ու-  
սուցի ընթերցողներին:

Մի խոթամանակ պետք է անպայման կապ հաստատել տեղական  
կուսակցական կազմակերպությունների, տեղական խորհրդի և  
կոլտնտեսության վարչության հետ:

Այս կազմակերպություններն, ինչպես մենք արդեն ասել ենք,  
կողմն են մամուլի տարածման աշխատանքների մեջ ներգրավելու  
լավագույն կոլտնտեսականներին, գյուղթղթակիցներին, ուսուցիչ-  
ներին, կոմյերիտականներին, կապի սեկցիայի անդամներին:  
Ակտիվիստները կողմն են ուսումնասիրելու թերթերի պահանջը,  
նրանք բացատրական աշխատանք կտանեն բաժանորդների մեջ:

Մեանով պետք է սկսի իր աշխատանքները մամուլի տարա-  
ծումով զբաղվող՝ կապի յուրաքանչյուր աշխատող:

Սպասարկվող բնակչությունը մանրամասն կերպով ուսում-  
նասիրելուց հետո կարելի չէ պարզ պատկերացնել իրեն, թե առա-  
ջին հերթին ինչպիսի թերթեր և ժուռնալներ պետք է առաջարկել  
այդ ուսուցիչ ընթերցողներին:

Փայտամշակման շրջանում մեծ թվով բաժանորդներ կլինեն  
«Лесная промышленность» թերթին: Փարբիկա-գործարանային  
ուսուցում մեծ պահանջ կլինի այնպիսի թերթերի, վորոնք լուսա-  
բանում են արդյունաբերության տվյալ ճյուղի կյանքն ու աշխա-  
տանքը: Որինակ, մետաղագործները կամ հանքափորները, կհետա-  
քըրքրվեն «Индустрия» թերթով: Չթի գործարանի բանվորներն  
և ինժեներա-տեխնիկական աշխատողներն, անկասկած, կպահան-  
ջեն «Легкая промышленность» թերթը և այլն:

Վորպեսդի կապի աշխատողները կարողանան յուրաքանչյուր  
ընթերցողի ապահովել նրան անհրաժեշտ թերթերով և ժուռնալ-  
ներով, նրանք պետք է իմանան, թե ինչ է ներկայացնում տա-  
րածվող հրատարակություններից յուրաքանչյուրը:

Ընթերցողների յուրաքանչյուր առանձին խավի համար մենք  
ունենք համապատասխան թերթ:

«Ունենալով թերթերի մի ամբողջ սխառեմ, կուսակցու-  
թյունը պետք է նրանց միջև քիչ թե շատ ճշտորեն բաժա-  
նի գործունեյության վորոտը, վորպեսզի յուրաքանչյուր  
թերթ առավելագույն կողմնորոշվի դեպի ընթերցող մասա-  
յի վորոշ խավը» («ВКП(б) в резолюциях», մաս I, էջ 520):

Ինչպես ասացինք, ԽՍՀՄ-ում լույս են տեսնում հսկայական  
քանակությամբ թերթեր: Մեր բոլոր թերթերը զբաղված են մի  
ընդհանուր գործով, այն է՝ նրանք պայքարում են սոցիալիստա-  
կան անտեսության սմբացման և զարգացման համար, Խորհրդա-  
յին պետության ե՛լ ավելի ամրապնդման համար, մեր հնդամյա  
պլանների կատարման համար, ոժտանդակում էն իրենց ընթերցող-  
ների գաղափարական-քաղաքական աճմանը: Սակայն յուրաքան-  
չյուր թերթ ունի իր առանձնահատկությունները, ընթերցողների  
իր շրջանը:

ՀամԿ(բ)Կ կենտրոնական Կոմիտեյի և ՀամԿ(բ)Կ Մոսկվայի  
կոմիտեյի որդան «Правда»-ն լուսաբանում է սոցիալիստական  
չինարարության բոլոր հիմնական և գլխավոր հարցերը: Նա ավե-  
լի շատ, քան մի վորեւս այլ թերթ, դրում է կուսակցական շինա-  
րարության, ժողովրդական անտեսության քաղաքական դեկավա-  
րության խնդիրների շուրջը, պետական արարատի, կուլտուրա-  
կան, ազգային շինարարության դեկավարման հարցերի շուրջը:  
Իսկ այնպիսի մի թերթ, ինչպիսին է, որինակ, «Гудок»-ը, գլու-  
խավորապես լուսաբանում է յերկաթուղային տրանսպորտի աշ-  
խատանքը. «Лесная промышленность» թերթը՝ անտառային

արդյունաբերութեան, անտառամթերումների կազմակերպման, անտառանյութերի լաստառաքման աշխատանքները, «Индустрия» թերթը՝ ծանր արդյունաբերութեան աշխատանքները և այլն:

Մեր թերթերից յուրաքանչյուրը, ինչպես և բոլշևիկյան մամուլն ամբողջությամբ, կազմակերպում է աշխատավոր մասսաներին ստալինյան հողամշակների կատարման շուրջը և իրադրծում է կյանքում կոմունիստական կուսակցութեան ու նրա կենտրոնական կոմիտեյի փորձումները: Բայց դրա հետ միասին թերթերից յուրաքանչյուրը հաշիվ յե առնում իր ընթերցողների հարցումներն ու պահանջները և լուսարանում այնպիսի հարցեր, վորոնք առանձնապես հետաքրքրում են այդ ընթերցողներին:

Յերևանում այս խնդիրներից, տարբեր թերթեր տարբեր ձևով են կառուցվում և տարբեր հարցեր են լուսարանում. ուսյոնական թերթը տարբերվում է մարդային թերթից, գործպրանային թերթը՝ կոլանտեսային թերթից: Ճանաչելով իր ընթերցողին, լուսարանելով այն հարցերը, վորոնք առավելապես կարևոր են տվյալ արտադրութեան համար և առանձնապես հետաքրքիր են ընթերցողների փորոշ խմբի համար, թերթը ավելի հաջողությամբ և հասնում իր նպատակին, այսինքն՝ ընթերցողների քաղաքական դաստիարակութեան և նրանց անտեսական ու կուլտուրական շինարարութեան պլաններին կատարման շուրջը համայնեղուն:

Վերցնենք տեղական թերթերը: Այնպիսի մի թերթի էՆերում, ինչպիսին է, որինակ, համաուկրաինական հանրապետական «Коммунист» թերթը, Ուկրաինայի կյանքը լուսարանելում է, իհարկե, ավելի լրիվ ու մանրամասն, քան թե համամիութենական թերթերում: Յերկրամասային թերթը հիմնական ուշադրութեանը դարձնում է իր յերկրամասի կյանքին: Ռայոնական թերթում տվյալ ուսյոնին վերաբերող նյութեր ավելի շատ կղտնենք, քան թե յերկրամասային թերթում: Գործարանային թերթը ղլխավոր ուշադրութեանը դարձնում է այդ գործարանի կյանքին ու աշխատանքին և այլն և այլն:

Յուրաքանչյուր ժուռնալ նույնպես հարմարեցված է վորոշ ընթերցողի համար: Որինակ, «Колхозный бригадир» ժուռնալը լուսարանում է կոլանտեսային շինարարութեան հասարակական-քաղաքական և կազմակերպական-անտեսական խնդիրները, նա յուրց է տալիս Ստալինյան գյուղատնտեսական արտելի կանոնադրութեան հիման վրա ձևուք բերած հաջողութեանները, ոժտնդակում է ստախանովյան շարժման հետագա ամձանը կոլանտեսու-

թյուններում, նա փոխանցում է առաջավոր բրիգադների ու ստախանովկանների այն փորձը, վոր նրանք ձևուք են բերել բարձր կայուն բերքապլութեան համար, կոլանտեսութեանների ամբապնդման ու կոլանտեսականների ունեւոր կյանքի հպմար և Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրաւունք ձևուք բերելու համար մղվող պայքարում: Այս ժուռնալը նկատի յե առնված կոլանտեսութեանների նախագահների, բրիգադիրների, ողակավարների և դաշտավարական բրիգադների շարքային կոլանտեսականների համար:

Իսկ մի այնպիսի ժուռնալ, ինչպիսին է «Интернациональный маяк» ժուռնալը, պետք է ամենալայն չափերով տարածվի ինչպես քաղաքում, նույնպես և դյուղում: Այս ժուռնալը հողվածներում, տեսութեաններում, ոչերկներում և իլյուստրացիաներով լուսարանում է արտասահմանի աշխատավորութեան կյանքն ու հեղափոխական պայքարը Փաշլիգմի ու կապիտալի դեմ, ինչպես նաև մեր յերկրի աշխատավորութեան հաղթանակները սօցիալիզմի կառուցման բնագավառում: Ժուռնալը ցուրց է տալիս ժողովրդական ճակատի պայքարը Փաշլիգմի և պատերազմի դեմ, հանուն խաղաղութեան, դեմոկրատիայի և ազգային անկախութեան, պատմում է այն ծանր պայմանների մասին, վորի մեջ գտնվում են բուրժուազիայի ղերինները՝ քաղաքատարկյանը, ոգնութեան և կազմակերպում Փաշլիգմի ղոհերի համար: Ժուռնալը ղետեղում է ՄՈՊՐ-ի կազմակերպութեանների աշխատանքներին վերաբերող հողվածներ և ղեկավարող նյութեր: Այս ժուռնալը դաստիարակում է մասսաներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի վոգով և իրեն նպատակ է ղետում ուժեղացնել մեր յերկրի աշխատավորութեան ինտերնացիոնալ կապը սահմանից դուրս գտնվող աշխատավորութեան հետ: Այդպիսի ժուռնալի պահանջը կղգացվի ամեն տեղ՝ ԽՍՀՄ-ի ամեն մի ուսյոնում:

Ժուռնալները պայմանական ձևով կարելի յե բաժանել մի քանի խմբերի, որինակ.

Կուսակցական ժուռնալներ. «Большевик», «Партийное строительство», «В помощь партучебе», «Коммунистический Интернационал», «Спутник агитатора» և այլն: Այս ժուռնալները նկատի յեն առնված ղլխավորապես խորհրդային ինտելիգենցիայի և Համկ(բ)կ անդամների ու թեկնածուների համար: Ինքնուստիքյան հասկանալի յե, վոր կուսակցական ժուռնալներ կարող է դուրս գրել յուրաքանչյուր քաղաքացի, ով ուղում է տիրապետել մարքսիզմ-լենինիզմին:



Պատանեկական և մանկական ժուռնալներ. «Молодой большевик», «Молодая гвардия», «Молодой колхозник», «Вожа-тый», «Пионер», «Мурзилка» և այլն: Ժուռնալների այս խումբը նկատի չէ առնված պիտեերական հասակի յերիտասարդության և յերեխաների համար:

Գյուղատնտեսական ժուռնալներ. «Колхозный бригадир», «Коневодство», «Колхозно-товарная ферма», «Лен и конопля», «Тракторист-комбайнер» և այլն: Արդեն ժուռնալների անուններն իսկ ցույց են տալիս, վոր նրանք նկատի չեն առնված կոլտնտեսա-կանների գանազան խմբերի, մեքենատրակտորային կայանների բանվորների համար, գյուղական ակտիվի համար:

Տեխնիկական ժուռնալներ: Այս խմբին են պատկանում հետե-վյալ ժուռնալները. «Авиационная промышленность», «Автогенное дело», «Литейное дело», «Горный журнал» և այլն: Այս ժուռնալները հարկավոր ե տարածել արդյունաբերության համա-պատասխան ճյուղերի բանվորների, ծառայողների ու ինժեներա-տեխնիկական աշխատողների մեջ:

Մանկավարժական ժուռնալներ. «География в школе», «Дошкольное воспитание», «Иностранный язык в школе» և այլն: Այս ժուռնալները գլխավորապես տարածվում են մանկա-վարժների մեջ:

Բժշկական ժուռնալներ. «Гигиена и здоровье», «Гигиена и санитария», «Клиническая медицина» և այլն:

Գրականուրջյան, գրախոսուրջյան, ֆենադատուրջյան, արվեստի վերաբերող ժուռնալներ: Այս կարգին պատկանում են՝ «Новый мир», «Огонек», «Октябрь», «Красная новь», «Роман-газета», «Творчество», «Театр», «Советская музыка», «Литературное обозрение», «Литературный критик» և այլն:

Սոցիալ-տնտեսագիտական և գիտական ժուռնալներ. «Под знаменем марксизма», «Проблемы экономики», «Историк-марксист», «Вестник Академии наук», «Астрономический журнал», «Журнал общей химии» և այլն:

Ֆիզկուլտուրային և սպորտի վերաբերող ժուռնալներ: Այս կարգին պատկանում են՝ «Гимнастика», «Теория и практика физической культуры», «Физкультура и спорт» և այլն:

Բացի դրանից, մամուլը կարելի չէ ստորաբաժանել ըստ տե-րիտորիալ հատկանիչի.

միութենական լրագրեր և ժուռնալներ.  
հանրապետական.

ավտոնոմ հանրապետությունների և մարզերի-  
յերկրամասային, մարզային, օկրուգային.  
ռայոնական և քաղաքային.  
ստորին:

Վորպեսզի մամուլ տարածողը կարողանա ընթերցողին առա-ջարկել հատկապես այն լրագրերն ու ժուռնալները, վորոնք ավելի հետաքրքիր, հասկանալի ու ոգտակար են նրան, այսինքն, անհատորեն յուրաքանչյուր ընթերցողի մոտենալու համար, նա պետք ե մանրամասն կերպով ուսումնասիրի մամուլի յուրաքան-չյուր խմբի ընույթը և բովանդակությունը:

Այդ ծանոթությունը կարելի չէ ձեռք բերել այն բազմաթիվ պրոսպեկտների, պլակատների, թուղթիկների և ռեկլամի այլ ձե-վերի միջոցով, վորոնք հրատարակչությունների և կապի ժող-կոմատի մամուլի տարածման ու առաքման կենտրոնական վար-չության կողմից ուղարկվում են տեղերին:

ԶՈՐՐՈՐԴ ԹԵՄԱ

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԶԵՎԵՐՆ ՈՒ ՄԵՓՈՂՆԵՐԸ

Մամուլի տարածման գծով տարվող մասսայական աշխատանքի ձևերն ու մեթոդները չափազանց բազմազան են, և այդ բոլորի մասին այստեղ հնարավոր չէ պատմել: Մակայն մամուլը հաջող կերպով տարածելու համար ամենակարևորը մասսայական քաղաքական աշխատանքն է, այն է՝ թերթերի ընթերցումը, զրույցները կոլտնտեսականների և կոլտնտեսուհիների հետ, ղեկուցումները մամուլի մասին, ընթերցողների կոնֆերենցիաները, մամուլի տախտակները և պլակատների, լուսավորված վահանների ու թռուցիկների ձևով լավ կազմակերպված ունկնամը և այլն:

Այստեղ կանգ առնենք մամուլի հետ կապված մասսայական աշխատանքների մի քանի ձևերի ու մեթոդների վրա, վորոնք մատչելի չեն մամուլի յուրաքանչյուր տարածողի համար:

Բարձրագույն ընթերցումներ: Մամուլի տարածման գծով տարվող մասսայական աշխատանքների լավագույն և փորձված ձևերից մեկը հանդիսանում է բարձրագույն ընթերցումը:

«Թերթերի բարձրագույն ընթերցում, զրույցներ, հարց ու պատասխանի յերեկոներ՝ ահա քաղաքական աշխատանքի՝ կոլտնտեսության լայն մասսաների համար առավելագույն մատչելի դործուն այն ձևերը, վորոնք իրենց միանգամայն արդարացրել են» («Правда» 22/VI 1938 թ.):

Բարձրագույն ընթերցումներն ընտելացնում են ունկնդիրներին թերթերի սխտեմատիկ ընթերցման, սրում են նրանց ուշադրությունը հիմնական և առավելագույն կարևոր հարցերի շուրջը, ոժանդակում են թերթի նյութերը լավ ըմբռնելուն: Թերթերի ընթերցումը կոլտնտեսության լայն մասսաներին ծանոթացնում է կուսակցության վորոշումների, կուսակցության ու կառավարության ղեկավարների արտասանած ճառերի և մեր յերկրում ու արտասահմանում տեղի ունեցած կարևորագույն ղեպքերի հետ: Թեր-

թերի ընթերցումը, վորպես կանոն, պետք է անցկացնել կուսակցական կազմակերպության ղեկավարության մոտ: Նրա հետ տարվելիք աշխատանքը պետք է գտնվի կուսակցական կազմակերպության ուշադրության կենտրոնում» («Պրավդա» 22/VI 1938 թ.):

Դժբախտաբար, կապի վոչ բոլոր աշխատողներն են ակտիվորեն մասնակցում բարձրագույն ընթերցումներ կազմակերպելուն: Նրանցից շատերն այդ իրենց գործը չեն համարում: Կապի այդ աշխատողները դեռևս չեն ըմբռնել թերթերի բարձրագույն ընթերցումների ամբողջ կարևորությունը, վորը մասսաների քաղաքական դաստիարակության լուրջ և գործուն միջոցն է հանդիսանում:

Բուլչեիկյան մամուլի պատմությունից մենք դիտենք, վոր բարձրագույն ընթերցումները ծագել են դեռևս նախահեղափոխական շրջանում: Բանվորներն այն ժամանակ բուլչեիկյան թերթերի կոլեկտիվ ընթերցանություն էյին կազմակերպում: Կարգացած համարները նրանք ձեռքեծեռք էյին հանձնում: Թերթերի մաշված համարներն արտատպվում էյին գրամեքենայի վրա, արտագրվում էյին ձեռքով և այնուհետև նորից տրվում էյին կոլեկտիվորեն կամ անհատորեն կարդալու համար:

Ահա թե ինչ է ասում Վ. Ի. Լենինը «Искра» թերթի բանվորների կողմից կատարվող կոլեկտիվ ընթերցանության մասին:

«Յես ճանաչում էյի բանվորներ, վորոնք իրենք էյին «Искра»-ն տարածում մասսաների (այնտեղի) մեջ և միայն ասում էյին, վոր լրագիր քիչ կա: Յես հենց նորերս լսեցի «կովի դաշտից յեկած զինվորի» պատմությունը, թե ինչպես Ռուսաստանի կենտրոնի գործարանային այդպիսի հետ ընկած վայրերից մեկում «Искра»-ն կարդում են միանգամից բազմաթիվ խմբակներում, 10—15 հոգուց բաղկացած ժողովներում, ընդվորում կոմիտեն և յենթակոմիտեները նախապես իրենք կարդում են յուրաքանչյուր համարը, միտեղ նախանշելով, թե հատկապես ինչ ձևով յուրաքանչյուր հոգված պետք է ողտագործել աղխացիոն հաղորդագրության մեջ» (Յերկերի ժողովածու, հատ. V, ռուս. հրատ. էջ 233):

Բայց ի՞նչպես կազմակերպել թերթերի բարձրագույն ընթերցումը:

Բաժանմունքի պետը, կապի գործակալության վարիչը կամ փոստատարը պետք է համաձայնության դան կոլտնտեսության կուսակազմակերպության քարտուղարի և կոմյերիտական կազմակերպության քարտուղարի հետ, վորպեսզի վերջիններս բարձրաձայն ընթերցումներ անցկացնելու համար տրամադրեն ամենից ավելի դրագետ և դարդացած կոլտնտեսականները: Լավ կլինի այդ գործին մասնակից դարձնել դյուղական ինտելիգենցիային: Ֆուրաքանչյուր բրիգադի (իսկ յեթե բրիգադները խոշոր են, ապա յուրաքանչյուր ողակի) համար, կարմիր անկյունում, խորճիթ-ընթերցարանում ակումբում և դաշտերում դյուղատնտեսական աշխատանքների ժամանակ պետք է առանձնացնել մի այդպիսի լավ դրագետ և դարդացած մարդ՝ աշխատանքից ազատ ժամերին թերթերի բարձրաձայն ընթերցում անցկացնելու համար:

Թարմ թերթեր և ժուռնալներ ստանալիս հարկավոր է ընթերցելու համար նշել կարևորագույն այն նյութերը, վորոնք մեանդամից կարող են հետաքրքրել ունկնդիրներին: Բացի կարևորագույն հոդվածներից և ինֆորմացիաներից (ներքին և միջազգային) լավ կլինի կարդալու համար ընտրել այնպիսի նյութեր, վորոնք ավելի շատ կհամապատասխանեն կոլտնտեսականների արտադրական և կուլտուրական պահանջներին ու շահերին:

Անհրաժեշտ է նախորդ հայտարարել կոլտնտեսականներին, թե յերբ և վորտեղ պետք է անցկացվի թերթերի ընթերցանություն: Այդ անելը դժվար չէ. դրանում ընթերցողին միշտ կողնեն բրիգավորը, ողակավարը կամ խորճիթվարը:

Իներենք կապի գործակալության վարիչներից մեկի պատմածը, վորը պարզ կերպով ցույց է տալիս, թե ինչպիսի խոշոր նշանակություն ունի թերթերի բարձրաձայն ընթերցումը:

«Թերթը սիրում են: Դաշտում ընդմիջումի ժամանակ յես մեծ հաճույքով եմ կարդում թերթը կոլտնտեսականների համար: Մեկ անգամ մենք կարդացինք մի հոդված ազրոտեխնիկայի մասին: Հոդվածը կարդալուց հետո մենք հասկացանք, վոր յեթե նույնիսկ հողը լավ պատրաստենք, պարարտացնենք, սակայն այնտեղ ցանենք վոչ բարձրորակ սերմեր, լավ բերք սպասել չի կարելի: Հոդվածում մասնավորապես նշվում էր այն մասին, վոր սերմերի յարողիցացիան բերքատվությունը զգալիորեն բարձրացնում է: Մենք այդ նոր ազրոտեխնիկաումը չեյինք կիրառել, վորը և անդրադառնում էր բերքատվության վրա:

Այժմ մեզ համար պարզվեց, թե ինչ նշանակություն ունի

ազրոտեխնիկական մեջոցառումների կոմպլեքսային կիրառումը»:

Տեսնենք, թե ինչ նշանակություն է ունեցել այս դեպքում թերթը և ինչ դեր է խաղացել կապի գործակալության վարիչը:

Ազրոտեխնիկային վերաբերող հոդվածը շատ բան սովորեցրեց կոլտնտեսականներին: Կարդալով այդ հոդվածը, կոլտնտեսականները հասկացան, թե ինչու իրենց մոտ բերքատվությունը վատ է:

Ինչպես յերևում է, թերթը խոշոր գործնական դեր է խաղացել: Նա կոլտնտեսականներին, ոժանդակել է իրենց սեփական փորձով համոզվելու, վոր առանց ճիշտ ազրոտեխնիկայի բարձր բերք չի ստացվի:

Ինչպիսի՞ դեր է այստեղ խաղացել կապի գործակալության վարիչը: Նա թերթը հասցրել է կոլտնտեսականներին, կազմակերպել է թերթի ընթերցումը, ինքն ակտիվ մասնակցություն է ցույց տվել կարդացած հոդվածի քննարկմանը, ոժանդակել է կոլտնտեսականներին իրենց կոլտնտեսության մեջ կիրառելու թերթի մեջ նկարագրված առաջավոր փորձը:

Այն մասին, թե ինչպես բարձրաձայն ընթերցանությունն ոժանդակում է մամուլի տարածմանը, իր նամակում պատմում է նաև կոլտնտեսային փոստատար՝ Իվան Իլչենկոն (Կլեվի մարզի Չերկասսկի ույուրի Լոմովատոյե դյուղ): Յերկու տարվա ընթացքում ընկ. Իլչենկոն կարողացել է իր շրջանամասի բնակիչներին ապահովել թերթերով և ժուռնալներով: Նրա աշխատանքի մեթոդը շատ պարզ է, սակայն տալիս է խոշոր հետևանքներ:

Իլչենկոն հաճախ զրուցում է կոլտնտեսականների հետ: Հավաքում է իր շուրջը մի տասը մարդ և սկսում է նրանց համար կարդալ մեր յերկրում և արտասահմանում տեղի ունեցող հետաքրքիր դեպքերի մասին, չինական ժողովրդի՝ յապոնական ուղամաճիկների դեմ մղվող պայքարի մասին: Մեկ անգամ նա հավաքել է մի քանի ծերունի և նրանց համար «Правда»-ից կարդացել է «Նվիրողներ Չինաստանի պատերազմից» հոդվածը: Ընթերցումն ավարտելուց հետո խոսք է բացվում մեր խորհրդային ավիացիայի մասին: Ընկ. Իլչենկոն ծերունիներին մանրամասն պատմում է, թե ինչպես մեր հպարտ բաղնիքը, ստալինյան սաները, Սասան լճի ույուրում Չախախել են յապոնական սամուրայներին: Պատմությունը ավարտելուց հետո ընկ. Իլչենկոն սկսում է խոսել թերթերին բաժանորդագրվելու մասին: Հենց այնտեղ էլ նրա մոտ միանդամից բաժանորդագրվում են ավելի քան տասը կոլտնտեսական:

Մամուլի տախտակներ: Մամուլի տարածման դժուր աշխատանքները մի ուրիշ լավ ձևը մամուլի տախտակների կազմակերպումն է: Նրանց միջոցով թերթը կոլխոդային լայն մասսաների սեփականությունն է դառնում: Թերթ կարգալուր կոլտնտեսականները ժամանակին ծանոթանում են կուսակցության և կոոպերացիայի բոլոր միջոցառումներին, լավագույն մարդկանց նվաճումներին, մեր յերկրում և արտասահմանում տեղի ունեցող կարևորագույն իրադարձություններին:

Ինչպես հայտնի չէ, վորոչ հրատարակությունների համար լիմիտ է սահմանված (լիմիտավորված հրատարակությունների տարածման մասին տես հինգերորդ թեմայում): Բնական է, վոր մամուլի տախտակները, կամ ինչպես նրանց նաև կոչում են՝ լրագրային ցուցափեղկերը—այդպիսի լիմիտավորված թերթերի համար գյուղական վայրերում առանձնապես կարևոր նշանակություն ունեն: Դժբախտաբար ամեն տեղ ցուցափեղկեր չկան, կապի մի քանի աշխատողներ թերագնահատում են լրագրային ցուցափեղկերի նշանակությունը: Իսկ մինչդեռ այդպիսի ցուցափեղկերի կազմակերպումը մամուլի տարածողներին անմիջական պարտականությունն է: Լրագրային ցուցափեղկեր կազմակերպելու դործի մեջ անհրաժեշտ է ներգրավել հասարակայնությունը:

Վոր տեղերում հասարակայնությունը շահագրգռված է լրագրային ցուցափեղկեր կազմակերպելու գործում, վկայում են այն նամակները, վորտեղ ստվում է, թե վորքան խոշոր մասնակցություն են ցուցաբերում գյուղի աղտիվիտներն ու կոլտնտեսային հասարակայնությունը այդ ցուցափեղկերի կազմակերպմանը:

Ահա թե ինչ է դրում Ռոզոլովսկի խրճիթ-ընթերցարանի վարիչ՝ ընկ. Կոչեբայսվը (Նովոսիբիրսկի մարզի Ռոզինսկի ուայոնի «Политотделец» կոլտնտեսություն):

«Յես վորպես խրճիթվար հաճախ նկատում եմ, թե ինչպիսի հետաքրքրություն է առաջ բերում թերթը կոլտնտեսականներին մեջ և ինչքան մեծ է նրա պահանջը: Յես համաձայնություն չեկա «Ленинский путь» կոլտնտեսության նախագահի հետ և մենք մոտ որերս ցուցափեղկ կազմակերպեցինք, վորի մեջ կախվում են մեր ուայոնական թերթը և կենտրոնական թերթեր: Մամուլի տախտակը մեծ թվով ընթերցողներ է գրավում»:

Ուսուցիչ՝ Ֆ. Կիթվատիկներ (Մուզավական ԱԽՍՀ, Կոլիբիկուսկի ուայոն) գրում է.

«Գյուղխորհրդի ընդլայնած պլենումում յես հարց գրի լրագրային ցուցափեղկեր կազմակերպելու մասին: Նախատեսվեց

այդպիսի ցուցափեղկեր կազմակերպել յերկու կոլտնտեսություն մեջ՝ «Վարչա-Յանում» և Ջերթինսկու անվան կոլտնտեսություն մեջ: Յերկու կոլտնտեսություններն էլ սիրով ընդունեցին այդ առաջարկությունը: Ապակիներն արդեն առնված են և կոլտնտեսության արհեստանոցում պատրաստվել են փայտե շրջանակներ: Յուցափեղկի մեջ պետք է կախվեն մեր մարդային թերթը և կենտրոնական թերթեր»:

Այս նամակները դալիս են ասելու այն պատրաստակամության մասին, վորով տեղական հասարակայնությունը, մանավանդ գյուղխորհուրդներն ու կոլտնտեսությունների վարչություններն ընդառաջում են ցուցափեղկեր կազմակերպելուն:

Անհրաժեշտ է, վոր կապի աշխատողները նույնպես լուրջ ուշադրություն դարձնեն այդ խնդրին:

Մամուլի տախտակները և ցուցափեղկերը պետք է կախել կոլտնտեսության վարչության շենքերում, ակումբներում, կարմիր անկյուններում, ֆերմաներում, դաշտային կայաններում, ալայներն այն տեղերում, վորտեղ սովորաբար հավաքվում են կոլտնտեսականները:

Մամուլի տախտակները վրա փակցվում են թերթեր, առանձնապես կարևոր և հետաքրքիր վորոշումներ կամ թերթերից կրթաբաժնուհին հոդվածներ ու տեղեկություններ:

Իհարկե, թերթերը կամ թերթերում յեղած տեղեկություններն ու հոդվածները, նոր թերթեր ստացվելու դեպքում, պետք է կանոնավոր կերպով փոխել տախտակի վրա: Առանձնապես կարևոր ու հետաքրքիր նյութերը հարկավոր է մի քանի օր թողնել վորպետի վորքան կարելի չէ մեծ թվով կոլտնտեսականներ հարավորություն ունենան ծանոթանալու նրանց հետ:

Յեթե թերթում (կենտրոնական, մարդային կամ ուայոնական) սովյալ կոլտնտեսություն կամ գյուղխորհրդի մասին տեղեկություն կամ հոդված կա, ապա անհրաժեշտ է այն կարել թերթից և կախել տախտակին: Յեթե այդ տեղեկությունը լուսարանում է կոլտնտեսության լավ աշխատանքը, ապա այն էլ ավելի բարձր աշխատանքային վերելք կառաջացնի կոլտնտեսականներին մեջ: Իսկ յեթե տեղեկությունը քննադատության է յենթարկում աշխատանքի բացերը, ապա այն մոբիլիզացիայի կենթարկի կոլտնտեսականներին այդ բացերը վերացնելու համար:

Մամուլի տախտակի վրա կախած լրագրային նյութերի շուրջն անհրաժեշտ է մասնալայական աշխատանք ծավալել: Այդ

նյութերի շուրջը տարվող գրույցի միջոցով կատի աշխատողները կոլտնտեսութեանն ու կոլտնտեսականներին կոզնեն ոգտադործելու նրանց մեջ նկարագրած արժեքավոր փորձը, մորիլիզացիայի կենթարկեն կոլտնտեսականներին ակտիվութունը տնտեսական-քաղաքական այս կամ այն խնդիրը իրագործելու ուղղութեամբ կոզնեն նրանց մեր յերկրում տեղի ունեցող այս կամ այն կարե-վոր դեպքին ժամանակին արձագանգելուն:

Մամուլի տախտակները սովորեցնում են կոլտնտեսականներին կանոնավոր կերպով թերթ կարդալու և ոգտադործելու այդ թերթերի նյութերն իրենց ամենուրեք կյանքի ու աշխատանքի ասպարեզում: Այն առանձին կոլտնտեսականները, վորոնք մինչ այդ թերագնահատում էին թերթի նշանակութունը, մամուլի տախտակի վրա կախված թերթերի բովանդակութեանը ծանոթանալու պրոցեսում, թերթի ավելի մեծ պահանջ կողման, կընտե-լանան թերթ կարդալուն և կբաժանորդագրվեն այդ թերթե-րին:

Թերթ ընթերցողների կոնֆերենցիա: Բացի աշխատանքի այն ձևերից, ինչպիսին են թերթերի բարձրաձայն ընթերցումը և մա-մուլի տախտակները, լավ և ժամանակ առ ժամանակ ընթերցող-ների կոնֆերենցիա հրավիրել:

Վորպեսզի ընթերցողների կոնֆերենցիան ոգտակար լինի, ամենից լավն է ամեն անգամ թերթերից կամ ժուռնալներից վո-րևե մեկի ընթերցողներին հրավիրել, և վոչ թե միանգամից մի քանի թերթերի ընթերցողներին: Այլապես խառնաշփոթութուն կստեղծվի:

Որինակ, կոլտնտեսութունը վորոչել է մարդային թերթի ընթերցողների կոնֆերենցիա գումարել:

Մարդային թերթն իր եջերում լուսաբանում է սոցիալիստա-կան դաշտերի ստախանովականների՝ տրակտորիստների, կոմ-բայնավարների, վուշարույծների, ճահնդեղաբույծների և այլն աշխատանքային փորձը, սոցիալիստական անասնապահութեան, կուլտուրայի համար պայքարող առաջավորների փորձը, կոլտն-տեսային կուսակազմակերպութեան աշխատանքները:

Տեղական կուսակցական և կոմյերիտական կազմակերպու-թյունները, գյուղխորհրդի և կոլտնտեսութեան ակտիվը, վորո-չելով հրավիրել ընթերցողների կոնֆերենցիա, պետք է ինչպես հարկն է նախապատրաստեն և համաձայնեցնեն այդ խնդիրը մար-դային թերթի խմբագրութեան հետ, վորպեսզի վերջինս իր ներ-կայացուցիչն ուղարկի կոնֆերենցիային մասնակցելու համար:

Կոնֆերենցիայի նախապատրաստման աշխատանքներին պետք է մասնակից դարձնել գյուղթղթակիցներին, մարդային թերթի ընթերցողներին և կոլտնտեսութեան ամբողջ ակտիվին:

Մարդային թերթի ընթերցողների հետ ունեցած գրույցների միջոցով պետք է պարզել թերթի մասին ունեցած նրանց կարծի-քը, հավաքել առաջարկութուններ, կարծիքներ և ըննադատա-կան դիտողութուններ:

Նույն միջոցին պետք է ստուգել, թե ժամանակին են այդ-յոք բաժանորդները ստանում իրենց թերթերը և բոլոր համար-ներն են ստանում թե վոչ:

Այս ձևի նախապատրաստական աշխատանքը պարզ պատկե-րացում կտա, թե ինչ կարծիք ունեն բաժանորդներն ու ընթեր-ցողները թերթի մասին, ինչ թերություններ են գտնում նրա մեջ, ինչ կուզեյին նրանք թերթից, ինչպես է տարածվում և տեղ հասցվում թերթը:

Յեթե կոնֆերենցիան լավ նախապատրաստված է, ընթերցող-ների համար հետաքրքիր կլինի: Նրանք ե՛լ ավելի պարզ կպատ-կերացնեն իրենց բոլշևիկյան մամուլի դերը՝ վորպես պրոպա-ղանդիստի, ագիտատորի և մասսաների կազմակերպչի, վորպես նրանց կյանքի, աճման ու աշխատանքի լավագույն ուղնականի: Մասնակցելով այդպիսի կոնֆերենցիային, ընթերցողը ե՛լ ավելի սերտորեն կկապվի թերթի հետ և կարող է սժանդակել, վոր այդ թերթը ե՛լ ավելի լավ ու հետաքրքիր դառնա:

Ընթերցողների կոնֆերենցիան կուսակցային կոլտնտեսական-ների դեպի թերթն ունեցած հետաքրքրութունը և կապելացնի նրա բաժանորդների թիվը:

Ընթերցողների կոնֆերենցիայում գրանցումները (արձանա-գրությունները) պետք է տարվեն ամենամանրամասն կերպով: Կոնֆերենցիայից հետո այդ արձանագրությունները պետք է ու-ղարկել թերթի խմբագրութեանը: Խմբագրությունն այդ նյու-թերը կոգտադործի իր աշխատանքները բարելավելու նպատա-կով:

Ընթերցողների կոնֆերենցիա կազմակերպելու վերաբերյալ մեր բերած պլանն օրինակելի պլան է հանդիսանում: Սակայն ամեն անգամ և բոլոր դեպքերում պարտադիր է ընթերցողների կոնֆերենցիան կանխապես և խնամքով նախապատրաստել տե-ղական կուսակցական կազմակերպութեան ղեկավարութեամբ:

Ահա թե ինչպես է նկարագրում ընկ. Սոսկինը կուսակի մար-

դի, Սուջայի ուսուցիչ Մարտինովսկի գյուղխորհրդում կազմակերպված ընթերցողների կոնֆերենցիան:

Ակումբին առանձին-առանձին և խմբերով մոտենում են կանայք: Ակումբում աշխուժություն է սկսվում: Այդ կին ընթերցողներն են հավաքվում կոնֆերենցիայի, վորսկեպի պատմեն այն մասին, թե ինչ ոգուտ է տալիս նրանց «Крестьянка» ժուռնալը, ինչպես է նա ոգևում կին-կուլանտեսուհիներին իրենց քաղաքական և կուլտուրական մակարդակը բարձրացնելու ասպարեզում, ինչպիսի թերութուններ ունի նա:

Յերեք հարյուր մարդ ուշադրությամբ լսում էլին բոլոր կյան մամուլի մասին տրվող զեկուցումը, իսկ զեկուցումը վերջանալուց հետո սկսվեցին յեւույթները:

Պրասկովյա Իվանովնա Պրիխոդկին ասաց:

— Յես «Крестьянка» ժուռնալի հին ընթերցող եմ: Յես միշտ մեծ սիրով կարդում եմ այդ ժուռնալը: Ժուռնալը մեծ չափով ոգևեց ինձ իմ զարգացման գործում: Յես մի ընկերուհի ունեմ՝ Մարիա Տրավկինա անունով: Նա անդրազետ է: Հաճախ նա գալիս է ինձ մոտ և խնդրում, վոր կարդամ նրան ժուռնալը: Սակայն ժուռնալը թերութուն էլ ունի. նա իր մեջ զեղարվեստական պատմվածքներ և բանաստեղծութուններ քիչ է պարունակում, վոչինչ չի գրում կանանց մեջ հակակրոնական աշխատանք տանելու մասին:

Նրանից հետո հանդես է գալիս ողակավար-ստախանովական Կսենիա Գարիպլեյան:

— Մի քանի տարի յե, ինչ ժուռնալ եմ դուրս գրում— հայտնում է նա: — Ժուռնալում յես կարգացի Մարիա Իեմչենկոյի հոդվածը: Յես մտածեցի, վոր ինքս ել կարող եմ աշխատել այնպես, ինչպես Մարիա Իեմչենկոն: Յես ուշադրությամբ հետևում ելի ժուռնալին, վորտեղ հաղորդվում էր գյուղատնտեսության առաջավոր մարդկանց փորձը: Մամուլի միջոցով յես սովորեցի, թե ինչ է հարկավոր անել և ինչպես պետք է աշխատել բարձր բերք ստանալու համար: Յես կիրառում ելի ագրոտեխնիկական կանոնները: Ինձ առաջ քաշեցին վորպես ողակավար: Ստախանովաբար աշխատելով՝ յես իմ ողակիս հետ հասա բարձր բերքատվության:

Մենք պարտավորութուն ենք վերցրել մեկ հեկտարից ստանալ վոչ պակաս քան 1000 ցենտներ ճակնդեղ:

Ամբողջ ձմեռն աշխատում և սովորում էլինք: Յես ընդուն-

վեցի կոմյերիամիության մեջ: Յես իմ ողակիս հետ սխտեմատիկարար գրույցներ և թերթերի ընթերցանութուն եմ անցկացնում:

Կսենիա Գարիպլեյան կոչ արեց բոլոր ներկա յեղող կանանց սկսվորեն մասնակցելու կուլանտեսության արտադրական և կուլտուրական-քաղաքական կյանքին, կանոնավոր կերպով կարդալ թերթեր ու ժուռնալներ:

Ընթերցողների նույնպիսի կոնֆերենցիաներ անց են կացվել նաև ուրիշ գյուղխորհուրդներում: Կոնֆերենցիաներին մասնակցել են ալեիլի քան 1500 մարդ: Բոլոր կոնֆերենցիաներն անց են կացել մեծ վոգուորությամբ: Շատերը նորից բաժանորդագրվել են ժուռնալին:

Ռեկլամ: Մամուլը ճիշտ և լայնորեն տարածելու գործում խոշոր դեր է խաղում ռեկլամը: Գոյութուն ունեն ռեկլամի բազմատեսակ ձևեր, բայց ամեն մի ռեկլամ էլ հավասարապես չի ոգևում մամուլի տարածմանը: Պետք է կարողանալ ոգտագործել ռեկլամը: Այն ժամանակ սլակատները, թուղցիկները և կոչերը կնպաստեն մամուլի հաջող տարածմանը: Ինչ ոգուտ, որինակ, յեթե «Индустрия» թերթի հրատարակչության սլակատը կախենք կուլանտեսության վարչության մեջ, իսկ «Учет и финансы в колхозах» ժուռնալին վերաբերող թուղցիկը փակցնենք վորեւ տեղ գործարանում: Պարզ է, վոր վոչ մի ոգուտ չի ստացվի: Ռեկլամը, վորպես կանոն, պետք է ողղված լինի ընթերցողների վորոշ խմբի:

Լավագույն տարածողների փորձը ցույց է տալիս, վոր ռեկլամային նյութերի խելացի ոգտագործումից հիանալի հետևանքներ են ստացվում: Տարածման այդ աշխատողները սլակատները, թուղցիկները, կոչերը կախում են աչքի ընկնող տեղում, այնպես, վորպեսզի նրանք գրավեն բնակչության ուշադրութունը: Պարզ է, վոր ռեկլամը նման ձևով ոգտագործելու զեպքում նա կհասնի իր նպատակին: Սակայն հաճախ հրատարակչութուններից ստացված ռեկլամային նյութերը նույնիսկ չեն էլ փակցնում: Յերբեմն հին, պատուոված, փոշով ծածկված սլակատն ամխներով մնում է պատից կախված: Կապի աշխատողները պետք է խնամքով վերաբերվեն ռեկլամային նյութերին և ճիշտ ձևով ոգտագործեն այդ նյութերը:

Մամուլի լավագույն տարածող կապի աշխատողները, բացի հրատարակչութուններից ստացված սլակատների ու թուղցիկ-

ների ոգտագործումից, իրենք տեղերում մեծ նախաձեռնութիւն  
և հնարամտութիւն են ցուցաբերել: Որինակ, Սեյալերի ուսո-  
նում (Ղրիմի ԱՆՍՀ) կապի աշխատողները լայն չափով ոգտա-  
գործել են կինոն ռեկլամի համար: Կինոֆապիւնի վրա նկարա-  
հանել են թերթերին բաժանորդագրվելու կոչ անող լողունդներ,  
տպագրել են հրատարակչութիւններին ստացված մի քանի պլա-  
կատներից կազմված մոնտաժ, և ստացվել է մոչ այնքան մեծ  
ռեկլամ կինոֆապիւնի վրա, մորը և ցուցադրվել է յուրաքան-  
չյուր նկարից առաջ շրջանի բոլոր կինո-թատրոններում: (Կինո  
ֆապիւնի վրայի մակագրութիւնները նախապես պետք է հաս-  
տատվեն սրբիտի կամ կրայլիտի լիազորի կողմից):

Ռյազանի մարզի կապի աշխատողներից մեկը մամուլը տարա-  
ծելու ժամանակ հմտորեն ոգտագործում է իր կողմից կազմված  
մի ալբոմ, մորի մեջ տեղափոխված են թերթերի կտրվածքներ և  
ժուռնալների չափկներ: Նա գրում է.

«Յերբ յես թերթ եմ կարդում, նրա մեջ այն ամենը, ինչ կա-  
րեար է, յես ընդգծում եմ, մորպեսզի հետագայում կարգացած  
նյութերն ոգտագործեմ իմ ազիտացիոն աշխատանքի ընթաց-  
քում:

Մի շարք տարիների ընթացքում թերթերի կտրվածքներից  
և ժուռնալների գունազարդ չափկներից յես չափազանց հետա-  
քրքիր ալբոմներ եմ կազմել: Յես կազմել եմ ալբոմներ Ստալի-  
նյան Սահմանադրութիւն մասին, կոլտնտեսային շինարարութիւն  
մասին, Հյուսիսային բեռը նվաճելու մասին, դեպի Ամերիկա  
կատարած թռիչքների մասին, Իսպանիայի դեպքերի մասին, Չի-  
նաստանի մասին, գիտութիւն ու տեխնիկայի մասին:

Այդ ալբոմները յես ցույց եյի տալիս կոլտնտեսականներին  
և ոգտագործում եմ ժողովներում ունեցած յեւրոյթներն իս ժամա-  
նակ և մամուլի բաժանորդագրութիւնն հավաքելիս: Նրանք ոգ-  
նում են ընթերցողին իրեն հետաքրքրող թեմայի վերաբերյալ  
նյութերի հետ ծանոթանալուն»:

Ղերբցողների ցամակները: Մամուլի տարածմանն ոժանդա-  
կելու ասպարեզում գործուն միջոցներից մեկը կոլտնտեսութիւն-  
ների անլանի մարդկանցից ստացվող նամակներն են: Թերթին  
ուզող իրենց նամակներում նրանք կարող են պատմել, թե  
ինչպես թերթի ոգնութիւնը նրանք իրենց աշխատանքներում հա-  
ջողութիւններ են ձեռք բերում և բարձրացնում են իրենց կուլ-  
տուրական-քաղաքական մակարդակը:

Ինչպես է, որինակ, այդ կազմակերպվել Ղրիմի ԱՆՍՀ-ի  
Սեյալեր ուսոնում: Շքանչանակիր-տրակտորիստ ընկ. Վ. Մ.  
Շմիդալը վարի ժամանակ բոլորից լավ աշխատելով, մեծ քանա-  
կութիւնով վառելիքի թանկութիւնը և արտադրութիւնը տնտեսել,  
առաջինն էր նաև բերքա-  
հավաքի ժամանակ: Կապի աշխատողների խնդրի համաձայն, շըր-  
ջանային թերթի համար նա մի հոդված էր գրել այն մասին, թե  
ինչպիսի ոգուտ է քաղել նա «Тракторист-комбайнер» ժուռնալը  
կարդալուց և մորպես սպացույց մի շարք փաստեր էր բերել:

Մի ուրիշ տրակտորիստ՝ ընկ. Մանչիկովը նույնպես պատ-  
մել է շրջանային թերթում, թե ինչ ոգուտ է ստացել նա այդ  
ժուռնալից և ինչպես է նա հասել այն բանին, մոր իր տրակտո-  
րը մոչ մի փչացում չի ունեցել: Այդ հոդվածներից հետո ժուռ-  
նալի բաժանորդների թիվը միանգամից բարձրացավ, մինչդեռ  
առաջ այդ շրջանում ժուռնալի պահանջը մեծ չէր:

Սոցիալիստական մրցակցութիւն: Մամուլի տարածողներից և  
կապի աշխատողների կոլեկտիվներից շատերը խոշոր հաջողու-  
թիւնների յես հասել շնորհիվ սոցիալիստական մրցակցութիւն  
փորձված մեթոդի: Սոցիալիստական մրցակցութիւնն պետք է  
կազմակերպել մոչ միայն կապի աշխատողների, այլև հասարա-  
կական տարածողների միջև: Այսպես, Սեյալերի ուսոնում, 1938  
թիւն կազմակերպվել էր մամուլի հասարակական տարածողների  
մրցակցութիւն: Մրցակցութիւնն նախաձեռնողը կոլտնտեսու-  
թիւնն հաշիտար ընկ. Մանինն էր, մորը «Третий Интернацио-  
наль» կոլտնտեսութիւնն մամուլի ակտիվ տարածողն է: Նա  
իր վրա մամուլի տարածման գծով վերցրել էր մի շարք  
պարտականութիւններ և մրցման էր հրավիրել Ղրիմի բո-  
լոր կոլտնտեսութիւնների հաշիտարներին:

Խարկովի մարզի Իդլումի ուսոնում մամուլի հաջող տարա-  
ծելուն նպատակ էր առաջադրել բաժանմունքի աշխատողների  
դիմումը՝ ուղղված կապի բոլոր աշխատողներին և շրջանի հա-  
սարակայնութիւնը:

Ահա թե ինչ է գրում այդ մրցակցութիւնն կազմակերպիչ  
ընկ. Վեստֆրիդը.

«Մտտերս շրջանի կապի բաժանմունքներից մեկում մենք անց-  
կացրինք բաժանմունքի աշխատողների ու կոլտնտեսային փոս-  
տատարների խորհրդակցութիւն: Խորհրդակցութիւնը հրավիրել  
է ինչ գյուղխորհրդի նախագահին, կուսկազմակերպչին և գյու-  
ղի ակտիվիստներին: Խորհրդակցութիւնն մասնակիցները սոցիա-  
լիստական պայմանադիր կնքեցին մամուլը լավ տարածելու հա-

մար և դիմեցին ամբողջ շրջանի կապի աշխատողներին և հասարակացուցանեցին՝ առաջարկելով հետևել իրենց որինակին: Այս դիմումը շրջանի բոլոր բաժանմունքների ու գործակալությունների կապի աշխատողները քննության առան կոլտնտեսական ակտիվի լայն մասնակցությամբ:

Շրջանի լավագույն փոստատարը մի հողված գրեց շրջանային թերթին մամուլի տարածման գծով տարած իր աշխատանքի փորձի մասին: Կապի մեր աշխատողները մեծ հետաքրքրությամբ կարդում և քննարկում էին այդ հողվածը:

Կապի շրջանային գրասենյակին կից մենք սկսեցինք «ОБМЕН ОПЫТОМ» բյուլետեն հրատարակել: Այդ բյուլետենի մեջ մենք մտցնում ենք մամուլ տարածողների դիտողություններն իրենց աշխատանքի ու գործնական հետևանքների մասին: Բյուլետենը լույս է տեսնում աստորյակում մեկ անգամ: Մենք այդ բյուլետենը ուղարկում ենք շրջանի բոլոր բաժանմունքներին և գործակալություններին»:

Գորկու մարզի կապի աշխատող ընկ. Միխայլովը, պատմելով մամուլի տարածման իր փորձի մասին, գրում է.

«Մեր փոստատարների՝ մամուլի տարածման գծով տարած ամբողջ աշխատանքը ընթանում է սոցիալիստական լայն մրցակցության հիման վրա: Մենք պարբերաբար ստուգման ենք յենթարկում վերցրած պարտավորությունների կատարումը և խրատում ենք մրցակցության առաջավորներին: Հեռ մնացողներին ձգում և ողնում ենք: Բացի դրանից մենք մրցակցության մեջ ենք մտել նաև հարևան բաժանմունքների հետ:

Փնջային ընդհանուր ժողովում մենք քննության առանք մրցակցության արդյունքները: Առաջավորները փոխանակեցին իրենց փորձը: Լավագույն փոստատարներն ու հասարակական տարածողները պարզևատրվեցին գեղարվեստական գրականությունով: Նշեցինք նաև թերթիությունները: Նույն ժողովում մեզանից յուրաքանչյուրն իր վրա նոր պարտավորություններ վերցրեց՝ թերթերի և ժուռնալների նոր բաժանորդներ ներգրավելու ուղղությամբ:

Սոցիալիստական մրցակցության պայմանադրեր կնքելիս անհրաժեշտ է նրանց մեջ մտցնել կոնկրետ և հատուկ պարտավորություններ, իսկ այնուհետև վորոշ ժամկետներում ստուգել դրանց կատարումը: Իսկ այն պայմանադիրը, վորը կազմված է ընդհանուր բառերից, առանց ցույց տալու, թե ով հատկապես,

ինչը և ինչ ժամկետում պետք է կատարի, վորը վորքի վորնչի չի պարտավորեցնում: Սոցիալիստական մրցակցություն կազմակերպելիս հարկավոր է հատուկ ուղղություն դարձնել աշխատանքները բարելավելու ուղղությամբ կոնկրետ ցուցանիշներ մշակելուն (բաժանորդների հետ մասսայական աշխատանք տանելը, հանձնողական քարտերի ստուգումը, առանց բրակի պատվերներ կազմելը, բաժանորդների ճիշտ հասցեները և այլն):



ԼԻՄԻՏԱՎՈՐՎՈՂ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱՇՈՒՄԸ

Խորհրդային Միության աշխատավոր մասսաների քաղաքական չտեսնված ակտիվությունն ու կուլտուրական մակարդակի աճումը, անդրազգիտության համարյա լիակատար վերացումը և ընդհանուր պարտադիր ուսումնական առաջացրել են թերթի, ժուռնալի և գրքի հսկայական պահանջ: Չնայած վոր թերթերի և ժուռնալների տիրաժներն անչեղորեն աճում են, այնուամենայնիվ մենք դեռևս չենք կարող բավարարել մամուլի պահանջը: Դրա պատճառն այն է, վոր թղթի արտադրության աճը չի հասնում բնակչության թերթերի, ժուռնալների և գրքերի նկատմամբ ունեցած պահանջի աճին:

Բացի այդ, թղթի արդյունաբերության մեջ դործող ժողովրդի թշնամիները քիչ վնաս չեն հասցրել ժողովրդական տնտեսության այդ ճյուղին:

Կուսակցության ու կառավարության առաջադրանքով մեկ մոտ ծավալված է թղթի գործարանների խոշոր շինարարություն: Դրանցից շատերը, որինակ, Բալախնայի, Կոնդալովի և Կամայի թղթի կոմբինատները վաղուց արդեն հանձնվել են շահագործման: Նորերս գործի դրվեց Սեդեժի թղթի կոմբինատը: Մյուսների շինարարությունը շարունակվում է: Յերբորդ հնդամյակի վերջին թղթի արտադրությունը 1937 թվի հետ համեմատած կավելանա համարյա յերկու անգամ: Թղթի արտադրանքի չափը յերբորդ հնդամյակի վերջին նախատեսված և հասցնել մեկ և կես միլիոն տոննի, փոխանակ 1937 թվին յերած 831,6 հազար տոննի:

Թղթի արտադրանքի ավելանալու հետ միասին, անկասկած էլ ավելի կբարձրանան մեր մամուլի տիրաժները: Իսկ այժմ, թղթի պահասի հետևանքով, միջանի հրատարակությունների (ամենից հաճախ թերթերի) տիրաժը սահմանափակված է, և չի

կարող լիովին բավարարել այդ հրատարակությունների ներածամբ բնակչության ունեցած պահանջը:

Ահա թե ինչու, վորպես ժամանակավոր միջոցառում, կերտվում է միջանի թերթերի ու ժուռնալների լիմիտավորման սխեմա:

Լիմիտը ոտարագրի բառ է, վոր նշանակում է սահմանազուտար: Լիմիտավորվող հրատարակություններ կոչվում են այն հրատարակությունները, վորոնց տիրաժները ավյալ մոմենտում սահմանափակված են այդ հրատարակության համար առավելագույն թվով:

Չենց այդ պատճառով էլ լիմիտավորվող հրատարակությունների ճիշտ բաշխումը կարևոր նշանակություն է ստանում:

Կապի շրջանային գրասենյակների տարածման և առաքման բաժինները, կապի վարչությունից ցուցում ստանալով, լիմիտները բաշխում են ըստ լրագրային հանդույցների, իսկ լրագրային հանդույցներն՝ ըստ կապի բաժանմունքների ու գործակալությունների: Լիմիտավորման պայմաններում լրագրի մեկ որինակը պետք է սպասարկի վորքան կարելի յե շատ ընթերցողների: Այդ պատճառով լիմիտավորվող հրատարակությունների բաժանորդագրությունն առաջին հերթին բաշխվում է գրագարանների, ակումբների, խրճիթ-ընթերցարանների, կուսկարինետների միջև, այսինքն՝ ըստ մամուլի կուլեկտիվ ոգտագործման վայրերի, նույնպես և ըստ գործարանների, հիմնարկների կուլեկտիվների: Լիմիտավորվող հրատարակությունների անհատական բաժանորդագրությունն ընդունվում է տեղական ղեկավար որդանների ցուցումով:

Այս հանգամանքը պարտավորեցնում է կապի աշխատողներին առանձին խնամքով մոտենալ լիմիտավորվող հրատարակությունների տարածման խնդրին: Կապի աշխատողների առաջ դրված խնդիրը կայանում է վոր միայն նրանում, վոր ամբողջ լիմիտը մինչև վերջին որինակն ոգտագործվի, այլ նաև նրանում, վոր այդ լրագրերն ու ժուռնալները ճիշտ բաշխվեն ըստ շրջանի գյուղերի ու կոլտնտեսությունների, վորպեսզի յուրաքանչյուր որինակ հատկապես հասնի այն բաժանորդին, վորին ավյալ լրագիրը կամ ժուռնալն առանձնապես հարկավոր է: Կապի աշխատողները պետք է պայքարեն լիմիտավորվող հրատարակությունները յավազույն կերպով տարածելու համար:

Լիմիտավորվող հրատարակությունները պետք է տարածել՝

Նկատի առնելով յուրաքանչյուր գյուղխորհրդի առանձնահատկությունները՝ բնակչության թիվը, կոլտնտեսությունների, հիմնարկների, կազմակերպությունների թիվը և այլն:

Ահա թե ինչ է պատմում Բաշկիրական ԱՌՍՀ-ի Գաղլեկանովսկի ռայոնի մամուլի տարածման և առաքման բաժնի պետ՝ ընկ. Կալենչիկը լիմիտավորված հրատարակությունների տարածման հետ կապված իր աշխատանքների փորձից.

«Լիմիտավորված հրատարակությունների բաժանորդագրությունը յես նախապես բաշխում եմ ըստ շրջանի բոլոր գյուղխորհուրդների, նկատի առնելով յուրաքանչյուր գյուղխորհրդի առանձնահատկությունները, այն է՝ բնակչության թիվը, կոլտնտեսությունների, հիմնարկների թիվը, նամապես և այդ լրագրերի հին բաժանորդների թիվը:

Այդ բաշխումը յես համաձայնեցնում եմ շրջանային կազմակերպությունների հետ: «Правда» և հանրապետական «Красная Башкирия» թերթերի բաշխումը յես համաձայնեցնում եմ կուսակցության ռայկոմի հետ: Կոմյերիտական և պիոներական հրատարակությունների բաշխումը՝ կոմյերիտիության ռայկոմի և ռայոնի ժողովուրդաժնի հետ:

Իրանից հետո միայն յես վորոշում եմ կապի յուրաքանչյուր բաժանմունքի բաժանորդների թիվը:

Տարվա բաժանորդագրությունն անցկացնելուց առաջ շրջանում մենք բոլոր բաժանմունքների պետերի, գործակալների և փոստատարների խորհրդակցություն հրավիրեցինք: Խորհրդակցության ժամանակ նրանց մենք մանրամասն հրահանգներ տվինք այն մասին, վոր լիմիտավորվող հրատարակությունների բաժանորդագրությունը պետք է բաշխել փոստատարների գործունեյության բոլոր շրջանամասերի միջև, հաշվի առնելով այդ շրջանամասերում յեղած գրադարանները, խրճիթ-ընթերցարանները, գլխոցները, ՄՏԿ-ները, անգրագիտության վերացման խմբակները և այլն, ինչպես և հին ընթերցողների թիվը:

Վորպեսզի լիմիտավորվող հրատարակությունների բաժանորդագրությունը ճիշտ դասավորվի, և վոր գլխավորն է, վորպեսզի բաժանորդագրության ավելցուկ և պակասորդ չառաջանա, անհրաժեշտ է, վորպեսզի շրջանի կենտրոնում, կապի բաժանմունքներում յուրաքանչյուր փոստատարի մոտ ընդունված բաժանորդագրությունների ամենորյա ճիշտ հաշվառում կատարվի: Այդպիսի հաշվառում յես կազմակերպել եմ ամբողջ շրջանում:

Լիմիտավորվող հրատարակությունների դժուր ժամկետը լրացած բաժանորդագրությունների առանձնացումը յես կատարում եմ նախորդ և կապի բաժանմունքների պետերին հանձնում եմ այն բաժանորդների ցուցակը, վորոնց բաժանորդագրության ժամկետն արդեն լրացել է:

Յեթե հին բաժանորդը վորևե պատճառով բաժանորդագրությունը չի նորոգում, այդ դեպքում փոստատարն այդ լրագրի համար բաժանորդագրություն է ընդունում մեկ ուրիշից:

Այդպիսով, մեր փոստատարները տեղի չեն տալիս դերաբաժանորդագրության թեկուզ և մեկ որինակով, ինչպես և չեն թողնում, վոր լիմիտավորված հրատարակության թեկուզ մեկ որինակ մնա չողտադորձված:

Յեթե բաժանորդը փոխադրվում է մեկ ուրիշ տեղ, վորը սպասարկվում է կապի մի այլ բաժանմունքի կողմից (որինակ, տրակտորիստները և այլն), ապա մենք բաժանորդագրությունն անմիջապես տեղափոխում ենք բաժանորդի նոր բնակավայրը, մտցնելով մեր հաշվառման մեջ համապատասխան փոփոխություն»:

Ընկ. Կալենչիկը կարողացել է այնպես անել, վոր իր մոտ լիմիտավորվող հրատարակությունների բաժանորդագրությունը կատարվում է ճշտությամբ և բաժանորդները վոչ մի բողոք չեն հայտնում: Այդ կարող է անել կապի՝ մամուլ տարածող յուրաքանչյուր աշխատող: Անհրաժեշտ է միայն պահպանել լիմիտային կարգապահությունը:

Շատ անգամ կապի բաժանմունքները կամ գործակալությունները այս կամ այն հրատարակության իրենց համար սահմանված լիմիտը լրիվ չեն ողտադորձում: Պարզ է, վոր այդ տեղի յե ունենում վոչ թե այն պատճառով, վոր բնակչությունը այդ հրատարակությունների պահանջը չի գգում, այլ այն պատճառով, վոր տարածումը վատ է դրված և այդ հրատարակությունների բաժանորդագրության հաշվառումը բացակայում է:

Կապի բաժանմունքներից և գործակալություններից շատերը այս հրատարակությունները չեն տարածում, այլ հույսները դնում են ինքնահոսի վրա: Նրանք սպասում են, վոր բաժանորդներն իրենք դան և ինդրեն, վոր իրենցից բաժանորդագրություն ընդունեն: Հաճախ պատահում է նաև, վոր կապի աշխատողները հրատարակում են բաժանորդագրությունն ընդունելուց, մինչդեռ այդ լրագրի համար սահմանված լիմիտը դեռևս չի սպառվել:

Կապի միջանկի աշխատողներ և մամուլի հասարակական տարածողներ հաճախ լիմիտը կատարում են բաժանորդագրելով մոտակա կոլտնտեսութուններին և գյուղերին մեկը և թողնելով մյուս կոլտնտեսութուններն ու գյուղերն առանց մամուլի: Պարզ է, վոր լիմիտավորվող հրատարակութունների տարածման նման անպետք մեթոդները պետք է վճռականապես դատապարտել:

Կապի ձեռնարկութունների խնդիրն է՝ այնպես կազմակերպել իրենց աշխատանքը, վոր բոլոր կոլտնտեսութուններն ու գյուղերը հազեցած լինեն մամուլով: Հարկավոր է նաև այնպես անել, վոր բաժանորդագրությամբ ապահովվեն այն ընթերցողները, վորոնք լրագիրն ողտագործում են կոլեկտիվ ընթերցանության համար: Այդ պատճառով շատ կարևոր է լիմիտավորվող լրագրերի և ժուռնալների տարածման խնդիրը համաձայնեցնել կոլտնտեսութունների կուսակցական և հասարակական կազմակերպութունների հետ:

Անհրաժեշտ է նաև լուրջ ուշադրություն դարձնել լիմիտավորվող հրատարակութունների վերահասցեյազրմանը: Ամեն մի քաղաքացի իրավունք ունի մեկ ուրիշ գյուղ կամ քաղաք փոխադրվելու գեպքում պահանջել, վոր իր գուրս գրած հրատարակութուններն ուղարկվեն իրեն այդ նոր հասցեյով: Այս գեպքում պետք է նկատի ունենալ, վոր նույնիսկ յեթե բաժանորդը մեկ ուրիշ վայր փոխադրվելու գեպքում չի հայտնել հասցեն փոխելու մասին, այնուամենայնիվ չի թույլատրվում բաժանորդագրությունը չեղյալ համարել:

## ՎՆՑԵՐՈՐԴ ԹԵՄԱ

### ՄԱՄՈՒԼԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՏԱՎԱՃԱՌՔԻՎ

Մամուլը հատավաճառքով տարածող աշխատողներն ամենալայն հնարավորութուններն ունեն բուլչեիկյան տպագիր խոսքը ժողովրդական լայն մասսաներին հասցնելու ասպարեզում: Նրանք կարող են և պարտավոր են տարածել մամուլը վոչ միայն հատավաճառ կիսակների ցանցի միջոցով, այլ և յերկաթուղում, ջրային տրանսպորտում, գործարաններում ու Փաբրիկաներում, համագումարներում, կոնֆերենցիաներում ու խորհրդակցութուններում, դաշտային աշխատանքների վայրերում, ձկնարդյունաբերութուններում, կուրորաներում և հանգստյան աներում: Մի խոսքով, մեր մեծ յերկրում չկա մեկ այնպիսի անկյուն, վորտեղ մամուլի տարածման ձեռներեց և իր գործը սիրող աշխատողը չկարողանա հաջողությամբ կատարել իր առաջ դրած պատասխանատու խնդիրը:

Միաժամանակ, հարկավոր է հիշել, վոր մամուլը հատավաճառքով տարածելու միջոցով մենք ընթերցողներին ընտելացնում ենք սիտեմատիկորեն լրագիր կարդալուն և այդպիսով պարբերական մամուլի համար մշտական բաժանորդների նոր կազրեր ենք ներգրավում:

Մամուլը հատավաճառքով տարածելու համար գոյություն ունեն կիսակներ, աղխամեքենաներ ու Փուրգոններ, վերջապես՝ ձեռքի վաճառք: Հատավաճառ տարածման կետերը պետք է դատափորել այն հաշվով, վոր աշխատավորության համար մաքսիմալ հարմարություն ստեղծվի: Նույն սկզբունքից պետք է յեղնել նաև հատավաճառ կիսակների աշխատանքի ժամերը սահմանելու ժամանակ: Հարկավոր է հաշվի առնել տեղական պայմանները, աշխատել վորքան կարելի յե լայն կերպով սպասարկել աշխատավորությանը:

Այն վայրը, վորտեղ գտնվում է հատավաճառ տարածման ավյալ կետը, վորոշում է և այդ կետում վաճառքի յենթակա

մամուլի ասորախմենտը: Որինակ, յեթե կիրոսկը գտնվում է գործարանում, ապա այդտեղ պետք է վաճառվի նաև այնպիսի լրագիր, վորը հրատարակվում է արդյունաբերության տվյալ ճյուղի աշխատողների համար, նմանապես և այդ գործարանի բանվորներին հետաքրքրող տեխնիկական գրականություն: Գյուղական շրջանում գտնվող կիրոսկը պետք է ունենա գյուղատնտեսական մամուլ:

Բայց կիրոսկավարը սոսկ գրավաճառ չէ: Նա մամուլի ակտիվ տարածող է, քոլչեխկյան տպագիր խոսքի պրոպագանդիստ է: Այդպես պետի լինի մամուլը հատավաճառով տարածող իսկական աշխատողը: Հետևաբար, յուրաքանչյուր կիրոսկավարի խնդիրն է՝ լավ ճանաչել մամուլի ասորախմենտը, վորպեսզի կարողանա ընթերցողների այս կամ այն խմբին առաջարկել հատկապես այն հրատարակությունը, վոր նրանց համար նախատեսված է և վոր նրանց ավելի հետաքրքրում է:

Միայն այն կիրոսկավարն ու ձեռավաճառը լավ արդյունքներ է կհասնի, վորը կկարողանա ընթերցողին առաջարկել նրան հարկավոր հրատարակությունները:

Այս տեսակետից ամեն տեսակ ուշադրության արժանի յե Գնեպրոպետրովսկի քաղաքի ստախանովական-կիրոսկավար, կապի վարպետ ընկ. Գենդլերի փորձը, վորի որինակին հարկավոր է հետևել:

Ընկ. Գենդլերը տարածելու համար ստանալով այս կամ այն հրատարակությունը, նախապես ինքը ծանոթանում է նրա հետ: Այնուհետև վերցնելով իր հետ լրագրերից, ժուռնալներից և բրոշյուրներից միջանի որինակ, գնում է գործարանների, հիմնարկների, արդյունաբերական արտեյների հատարակական կազմակերպությունները և ծանոթացնում է նրանց այս կամ այն հրատարակության բովանդակության հետ: Այդ դեպքում նա, իհարկե, աշխատում է, վոր այդ գրականությունը չմնա հիմնարկներում, գրասենյակներում, այլ ընկնի մասսայական ընթերցողի ձեռքը: Առաջին հերթին նա առաջարկում է այն հրատարակությունները, վորոնք ամենից ավելի կարող են հետաքրքրել տվյալ կոնկրետին: Նույն ակտիվությամբ նա տարածում է մամուլը փողոցում կամ գործարանի մոտ՝ առանձին քաղաքացիների մեջ: Ահա թե ինչ է գրել «Социалистическая связь» թերթը ընկ. Գենդլերի աշխատանքային փորձի մասին.

«Ընկ. Գենդլերը հանդիսանում է մասսայական-քաղաքական գրականության տարածման նոր մեթոդների նախաձեռնողը: Նա

վաղուց արդեն հանդիլ է այն մտքին, վոր կիրոսկավարի աշխատանքներն անհրաժեշտ է վերակառուցել:

— Տարածելով քոլչեխկյան մամուլը, — պատմում է ընկ. Գենդլերը, — մենք ըստ ելույթյան ազիտատորներ ու պրոպագանդիստներ ենք հանդիսանում: Այդ գործի կարևորության գիտակցությունը հարկադրեց ինձ ավելի լավ աշխատել, մամուլի տարածման համար նորանոր ձևեր վնտոել:

... Ընկ. Գենդլերի կիրոսկին մոտեցել է մի քաղաքացի: Մակերեսային հայացք ունենալով յեղած գրականության վրա, նա արդեն ուզում է հեռանալ: Կիրոսկավարը սկսում է նրա հետ խոսակցել, ցույց է տալիս նրան առանձին բրոշյուրներ, պատմում է նրանց բովանդակության մասին: Մարդու մեջ հետաքրքրություն առաջացավ և նա դնեց իր համար մի քանի բրոշյուր:

Այդ, թվում է թե, հասարակ դեպքը ընկ. Գենդլերի մեջ այն միտքը հղացրեց, վոր հին ձևով աշխատել չի կարելի: Մամուլը պետք է տարածել ակտիվորեն: Բայց վորպեսզի կարողանա վորևէ բրոշյուր հանձնարարել, հարկավոր է ծանոթ լինել նրա բովանդակությանը:

— Յե սկսեցի ծանոթանալ ամբողջ գրականության հետ — ստում է ընկ. Գենդլերը: — Առանձնապես կարևոր գրքերը և ժուռնալներից առանձին հոդվածներ անպայման կարդում եյի: Յես դեպքի, թե ինչպես ընդարձակվում է իմ աշխարհայացքը, և աշխատելն ինձ համար համեմատաբար հեշտացավ»:

Յերբ Գնեպրոպետրովսկում ստացվեցին նոր հետաքրքիր բրոշյուրներ, Գենդլերը վերցրեց նրանցից 400 որինակ և դուրս յեկավ քաղաքի կենտրոնական փողոցները: Հետևանքն այն յեղավ, վոր 20 րոպեյից, բոլոր 400 որինակն էլ արդեն վաճառված եյին: Վերցնելով դարձյալ 400 որինակ, ընկ. Գենդլերը նույն արագությամբ այդ էլ վաճառեց:

Գենդլերն իր հետ բրոշյուրներ վերցնելով դնաց Լենինի անվան գործարանը: Նա գրականությունը ձեռքին կանգնեց մուտքի դարպասի մոտ: Բանվորները գնելով այդ բրոշյուրները, խնդրում էյին կիրոսկավարին, վոր միշտ իրենց մոտ դա:

Անցյալ տարի սեպտեմբերի վերջին Գենդլերը յերկու որվա ընթացքում Նովոդարաստավի ուսյունի կոլտնտեսականների մեջ տարածեց 2 հազար որինակից ավելի մասսայական-քաղաքական գրականություն:

Գենդերը կիսակալարներից մի բրիգադա կազմակերպեց և մեկնեց Սոլունյանսկի ռալոնի կոլտնտեսութունները: Բրիգադան Գենդերի մեթոդով մեկ օրվա ընթացքում տարածեց 9 հազար բրոշյուր և հազար հատ հեղափոխական յերգ:

Անհրաժեշտ է, վորպեսզի բոլոր կիսակալարներն ամեն օր կիրառեն տարածման այն ակտիվ մեթոդները, վոր գործադրում է ընկ. Գենդերը և մամուլի տարածման ուրիշ ստախանովահաններ:

Յուրաքանչյուր կիսակում հարկավոր է մամուլի ցուցադրման տախտակ կազմակերպել, վորպեսզի ամեն մի քաղաքացի, մոտենալով կիսակին, տեսնի, թե ինչպիսի դրականութուն կա կիսակում:

Կիսակի մոտ անհրաժեշտ է նաև կազմակերպել լրագրերի ցուցափեղկ՝ մամուլը կոլեկտիվ կերպով ոգտագործելու համար: Այնտեղ, վորտեղ վորևե պատճառով դժվար է այդ անել, հարկավոր է ունենալ գոնե մեկ յերկու լրագիր, վորպեսզի յուրաքանչյուր քաղաքացի կարողանա կարգալ լրագրի վերջին համարը: Այդ առավել ևս անհրաժեշտ է, քանի վոր միջառք հրատարակութուններ լիմիտավորվում են և ամեն մեկը հնարավորութուն չունի այդպիսիները ձեռք բերելու:

Հատավաճառ տարածման դժով աշխատողների պարտականության մեջ է մտնում նաև դանագան բաժանորդագրային հրատարակութունների ռեկլամի ճիշտ ոգտագործումը: Ռեկլամային պլակատներն ու այլ նյութերը հարկավոր է կախել հասարակական վայրերում, այդ ռեկլամային մատերիալները վերցնելով հարկավոր է գնալ կոլեկտիվները և հանձնարարել նրանց անհրաժեշտ հրատարակութունները:

Աշխատավորությանը մասսայականա-քաղաքական վոչ-պարբերական մամուլով սպասարկելը բացառիկ կարևոր նշանակութուն ունի:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի և միութենական ու ավտոնոմ հանրապետութունների Գերագույն Խորհուրդների ընտրութուններն ակնառու կերպով ցույց տվին, թե հատավաճառի աշխատողները վոչ-պարբերական մամուլի տարածման ասպարեզում ինչպիսի մեծ դեր են խաղում:

Տարածողներից շատերը, մանավանդ կիսակալարները, խորապես գիտակցեցին այդ աշխատանքի ամբողջ քաղաքական նշանակութունը և բոլջևիկորեն կատարեցին իրենց առաջ դրած

խնդիրը: Նրանք կազմակերպեցին տանտիրուհիների ակտիվը, տներն էյին տանում գրքեր և բրոշյուրներ և բոլոր քաղաքացիներին հանձնարարում էյին գնել ընտրութուններին նվիրված գրականութունը:

Անհրաժեշտ է լայն կերպով արմատացնել աշխատանքի այս լավագույն մեթոդները մամուլը հատավաճառով տարածող կապի բոլոր աշխատողների մեջ:

ԼՐԱԳՐԵՐՆ ՈՒ ԺՈՒՌՆԱԼՆԵՐԸ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ ՀԱՍՑՆԵԼԸ

Բաժանորդներից լրագրերի ու ժուռնալների բաժանորդադրություններ ընդունելով նրանց սպասարկումը դեռ չի վերջանում: Մամուլը հաջող տարածելու համար անհրաժեշտ է այն նաև կանոնավոր հասցնել ընթերցողին:

Յեվ իսկապես, մամուլի տարածման մասին ինչ խոսք կարող է լինել, յեթե, ասենք, բաժանորդների կողմից դուրս գրված և արժեքը վճարված լրագրերը կապոցներով մնում են պառկած կոլտնտեսուծյան վարչությունում կամ գյուղխորհրդում, վորտեղից նրանց հասնողը կարող է տանել վորևե բան փաթաթելու կամ վորպես ծխախոտի թուղթ բանեցնելու համար: Բայց դժբախտաբար այդ դեռևս հաճախ է տեղի ունենում. լրագրերը հարկավոր է հանձնել անձամբ ամեն մի բաժանորդին, անկախ նրանից, թե վորտեղ է նա դռնվում՝ տանը թե դաշտում, և վսչ թե հանձնել կոլտնտեսուծյան վարչությանը:

Մամուլի տարածման և առաքման ասպարեղում կենտրոնական գեմքը կոլտնտեսային փոստատարն է: Նա յե ընդունում բաժանորդադրությունը և նա ել լրագրերը հասցնում է բաժանորդին:

Ահա թե ինչ է գրում «Красный просвещенец» (Իգրերդեյ, Տամբովի մարզ) կոլտնտեսուծյան փոստատար Դ. Չատեյկինն իր աշխատանքի մասին:

«Մամուլը տարածելիս յես խոսք տվի իմ սպաղա բաժանորդներին, վոր թերթերը կհասցնեմ լրիվ և ժամանակին: Այս խոստումը յես անչեղորեն կատարում եմ, ուստի և ինձ մոտ բաժանորդադրությունը ամսե-ամիս աճում է:

Բաժանորդներին լավ սպասարկելու համար յես ստացվող հրատարակությունների ցուցակ եմ պահում և հաչիլի յեմ աւնում, թե բաժանորդը վոր որվա կամ վոր համար թերթը և ժուռնալը ստացել է և վորը չի ստացել: Այդ ցուցակի համար

ձայն յես ցանկացած ժամանակ կարող եմ բաժանորդին տեղեկանք տալ, թե ամսվա ընթացքում քանի համար է նա ստացել և յերբ է ստացել վերջին համարը: Բացի դրանից, յես մի այլ ցուցակ եմ պահում, վորից կարելի յե իմանալ, թե ով յերբ է բաժանորդադրվել, ինչ ժամկետով և ինչքան դրամ է մուծել: Այդ ինձ հնարավորություն է տալիս ժամանակին նորոգել բաժանորդադրությունը, յեթե ժամկետն անցնում է (այսպես կոչված վերացվող բաժանորդադրություն): Այս ձևի հաչվառման հետևանքով Գ ամսյա ընթացքում յես վոչ մի բողոք չեմ ստացել մամուլը չհասցնելու մասին»:

Առաջին հայացքից թվում է, թե բաժանորդադրություն ընդունելն ու լրագրերը բաժանորդին հասցնելը հասարակ գործ է: Սակայն այս գործը, ինչպես և ամեն մի այլ գործ, ունի իր առանձին տեխնիկան և տոանձին կանոնները, վորոնց չիմանալու հետևանքն այն է լինում, վոր բաժանորդը կամ ժամանակին չի ստանում, կամ բոլորովին չի ստանում իր դուրս գրած լրագրերն ու ժուռնալները: Վորպեսզի մամուլն անխափան կերպով հասցվի բաժանորդին, անհրաժեշտ է ճիշտ և կանոնավոր ձևով մշակել ընդունված բաժանորդադրությունը: Այդ պատճառով, պատվերների ճիշտ և պարզ ձևակերպումը կարևոր հանգամանք է:

Այդ գործն արդեն առանձնապես բարդ չէ: Հարկավոր է միայն այդ գործին վերաբերվել բարեխղճորեն և ուշադիր կերպով, միշտ հիշելով, վոր ամենաաննշան սխալը (հրատարակության սխալ անուշը, բաժանորդների հասցեների աղավաղումը, բաժանորդադրության ժամկետի սխալ մատնանշումը և այլն) անխուսափելիորեն առաջացնում է լրագրերն ու ժուռնալները բաժանորդներին հասցնելու ընդհատում, իսկ յերբեմն ել կորուստ:

Կապի ժողովրդական կոմիտեի ատը բաժանորդադրության փաստաթղթերը ճիշտ լրացնելուն բացառիկ նշանակություն է տալիս:

Կապի աշխատողները պետք է ամեն ջանք գործ դնեն, վորպեսզի բաժանորդադրության փաստաթղթերում վերացնեն ամենաաննշան սխալների հնարավորությունը: Այնուամենայնիվ մինչև այժմ ել հաճախ լրագրերը և ժուռնալները կորչում են բաժանորդադրությունը սխալ ձևակերպելու հետևանքով: Այդ չարիքի դեմ հարկավոր է ամենաանողոք պայքար մղել: Լրագրի կորստյան կամ հաիչառակման յուրաքանչյուր դեպք պետք է հետաքննել և հանցավորներին պետք է յենթարկել խիստ պատասխանատվության:

Կոլտնտեսային փոստատարները կոլտնտեսութեան անդամ են հանդիսանում: Նրանցից յուրաքանչյուրը շահագործուած է, վոր իր կոլտնտեսութեանը լավ աշխատի, վոր բերքատուութեանը բարձր լինի, վոր պետութեան հանդեպ ունեցած պարտավորութեանները կոլտնտեսութեանը կատարի ժամանակին, վոր կոլտնտեսականներն ավելի ու ավելի լավ ապրեն, վոր աշխուրը շատ բարձր լինի: Այս նպատակին հասնելու համար հսկայական ոգնութեան է ցույց տալիս բոլշևիկյան մամուլը, վորը պետք է տեղ հասցնի կոլտնտեսային փոստատարը: Հարկավոր է միայն նրա աշխատանքը լավ կազմակերպել, ոգնել, վոր նա լրագրերը և ժուռնալները տեղ հասցնելու գործը որինակելի ձևով կարգի բերի:

Յանքը, բերքահավաքը, հացամթերումը՝ գրանք գյուղատնտեսութեան ամենապատասխանատու աշխատանքներն են: Մանավանդ այդ որերին լրագրերի ու ժուռնալների առաքումը պետք է կատարել անխափան և կանոնավոր: Հատկապես այդ ժամանակ լրագրերի առաքումը պետք է այնպես կազմակերպել, վորպեսզի յուրաքանչյուր կոլտնտեսական, յուրաքանչյուր կոլտնտեսուհի ամեն որ տեղյակ լինի այն ամենին, ինչ գրվում է մեր լրագրերում, վորպեսզի նրանք գիտենան, թե ինչպես են աշխատում առաջավոր կոլտնտեսութեանները, և, հետևելով նրանց որինակին, իրենք ել հասնեն բարձր ցուցանիշների:

Յանքի կամ բերքահավաքի ժամանակ, վորտեղ ել վոր գտնվելիս լինեն կոլտնտեսականները, նրանք պետք է ժամանակին լրագրեր ստանան: Յեթե կոլտնտեսականը գտնվում է դաշտում, ապա անհրաժեշտ է թերթը հասցնել նրան այնտեղ: Չկա կոլտնտեսային փոստատարի համար ավելի պատվավոր պարտականութեան, քան բոլշևիկյան մամուլը բաժանորդին արագորեն հասցնելը:

Այնպես կոլտնտեսականներից շատերը գտնվում են ելեվատորներում, հացահատիկը պետութեանը հանձնելու կետերում: Կապի աշխատողները պետք է հոգ տանեն, վոր այնտեղ ևս՝ կարմիր անկյուններում, կիսակներում և այլն լրագրեր և ժուռնալներ լինեն:

Կոլտնտեսականները, կապի աշխատողների կողմից տեսնելով նման հոգացողութեան, կոլտնտեսային փոստատարի աշխատանքների համար կառանձնացնեն ազնիվ և գրագետ մարդկանց, փոստը տեղափոխելու համար կարամադրեն ձիեր, ամեն կերպ կաջակցեն կապի աշխատանքների բարելավմանը:

Այսպես ուրեմն, կապի յուրաքանչյուր աշխատող և մամուլ տարածող պետք է հիշի հետևյալը:

Մամուլի տարածումը—քաղաքական խոշոր գործ է: Մամուլի տարածումը չի կարելի թողնել ինքնահոսի, այդ աշխատանքը հարկավոր է կազմակերպել, նրա հաջողութեան համար հարկավոր է պայքարել:

Մամուլի տարածման գծով տարվող ամբողջ աշխատանքը պետք է տանել տեղական կուսակցական կազմակերպութեանները՝ ղեկավարութեամբ և ոժանդակութեամբ, խորհրդային, կոլտնտեսային և հասարակական կազմակերպութեանների ակտիվ մասնակցութեամբ:

Կապի յուրաքանչյուր աշխատող իր աշխատանքների ընթացքում պետք է հենվի հասարակական տարածողների մշտական կազմերի վրա, պետք է նրանց հետ սերտ կապ պահպանի և նրանց ոժանդակութեամբ մշտապես պետք է բացատրի բոլշևիկյան մամուլի դերն ու նշանակութեանը:

Ընթերցողների մեջ անհրաժեշտ է տանել լայն մասսայական բացատրական աշխատանք: Լրագրերի ու ժուռնալների մասին պետք է պատմել: Լրագրերն ու ժուռնալները պետք է հասցնել այնտեղ, վորտեղ գտնվում է ընթերցողը:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի և կոլտնտեսուհու պետք է տալ նրան հարկավոր լրագրեր ու ժուռնալներ:


Մամուլը պետք է տարածել ամբողջ տարին, կապելով այդ աշխատանքը մեր յերկրում անցկացվող բոլոր տնտեսական ու քաղաքական կամպանիաների հետ:

**ՄՏՈՒԳԻԶ ՀԱՐՑԵՐ**

1. Ի՞նչ է ասել Լենինը կապիտալիստական կարգերի «մամուլի ազատութեան» մասին:
2. Բերե՛ք այնպիսի որինակներ, վորոնք բնորոշում են բուշուիկյան մամուլը, վորպես մասսաների կուլեկտիվ պրոպագանդիստ, կուլեկտիվ ագիտատոր և կուլեկտիվ կազմակերպիչ:
3. Ինչպիսի՞ քաղաքական խնդիրներ են դրվում մամուլի առաջ ստալինյան յերրորդ հնգամյակում:
4. Ինչի՞ց պետք է սկսել մամուլի տարածումը:
5. Ի՞նչ ոժանդակութեան կարող են ցույց տալ տեղական կուսակցական, կուլեկտիստական և խորհրդային կազմակերպութեանները կապի աշխատողներին մամուլի տարածման գործում:
6. Մասայական աշխատանքի ինչպիսի՞ ք հիմնական ձևեր գոյութեան ունեն մամուլի տարածման ասպարեգում:
7. Ի՞նչ են լիմիտավորվող հրատարակութեանները և ի՞նչպես պետք է այդ հրատարակութեանները տարածել:
8. Պատկեցե՛ք մամուլը հատավանատով տարածելու այն մեթոդների մասին, վոր գործադրում եք կապի վարպետ ընկ. Գենդլերը:
9. Ինչո՞ւ պետք է բաժանորդներին ամեն կերպ խորհուրդ տալ յերկարատև ժամկետի բաժանորդագրութեան:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ**

1. Դասախոսութեան կարգացե՛ք կապի բաժանմունքի, գործակալութեան բոլոր աշխատակիցներին համար և նրանց հետ միասին քննութեան առե՛ք յուրաքանչյուր թեման առանձին:
2. Գրեցե՛ք, թե այս դասախոսութեան հիման վրա ինչպիսի՞ միջոցառումներ եք վորոշել կիրառել կյանքում, վորպեսզի բարելավեք ձեր կողմից սպասարկվող բնակչութեան մեջ մամուլի տարածման և առաքման գործը: Միջոցառումների ծրագիրը հանձնեցե՛ք կոնսուլտանտին:
3. Ստուգեցե՛ք, թե կապի ձեր բաժանմունքում կամ գործակալութեան մեջ ճիշտ է տարվում արդյոք լիմիտավորվող հրատարակութեանների հաշվառումը, և վերացրե՛ք յեղած թերութեանները:



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

	<b>Եջ</b>
Ներածութեան . . . . .	3
<b>ԱՌԱՋԻՆ ԹԵՄԱ</b>	
Մամուլի դերը սոցիալիստական շինարարութեան մեջ . . . . .	9
<b>ՅԵՐԿՐՈՐԴ ԹԵՄԱ</b>	
Մամուլի տարածումը հարկավոր է կազմակերպել . . . . .	14
<b>ՅԵՐՐՈՐԴ ԹԵՄԱ</b>	
Ինչի՞ց սկսել մամուլի տարածումը . . . . .	26
<b>ՉՈՐՐՈՐԴ ԹԵՄԱ</b>	
Մասայական աշխատանքի ձևերն ու մեթոդները . . . . .	32
<b>ՀԻՆԳԵՐՈՐԴ ԹԵՄԱ</b>	
Լիմիտավորվող հրատարակութեանների տարածումը . . . . .	46
<b>ՎԵՑԵՐՈՐԴ ԹԵՄԱ</b>	
Մամուլի տարածումը հատավաճառով . . . . .	51
<b>ՅՈՒԹԵՐՈՐԴ ԹԵՄԱ</b>	
Նրազբերն ու ժուռնալները բաժանորդներին հասցնելը . . . . .	56



Գատ. խմբագիր Ա. Նազարեթյան  
Քարգժ. Հ. Ջաղեթյան  
Լեզվ. խմբ. Մ. Հովհաննիսյան  
Տեխ. խմբագիր Լ. Ոհանյան  
Սրբագրիչ Հ. Դսուխանյան  
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

---

Գլավխտի լրագոր № 2564, պատվեր № 207, տիրաժ 1000

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան,  
Ֆերեհան, Ալլահվերդյան № 65

« Ազգային գրադարան



NL0141092

15073